«Աստուած անեղ»ին՝ «Յետ կա-  
մատր»: Ապա «Չմահու Դատեան»  
(յատեանն): Օրի. թճ. «Պարգեւա-  
տուն» (իւր սարօթն): Ցրգ. «Փառա-  
ւորեսցուք»: «Ս. Աստուած որ  
թաղեցար»: Մնկ. դկ. ստեղի «Յով-

սեփ քեզ հաւատացեալ»: Աւետարան: «Տերն յետ ստեղծման»: «Խնդրեսցուք», «Կեցո», «Թումանեսազօր Եւ իրաշալի թաղմանդ»: Ապա շրկ. թկ. «Խաչի քո Թրիստոս» (ըստ Երեկոյի կանոնին): «Փառք սուրբ խաչիդ», «Ս. Խաչիս», «Պահպանիչ»:

Յերեկոյին ճրագալուցի, ծածկեալ ունելով զՄեղանն, ասասցեն զերիս «Ողորմեա»յսն Եւ զմասցեալն (Տե՛ս 'ի Տօնացուցի): Ժմտ. «Թրիստոս յարեաւ»: Փոխս՝ «Գովեա Երուսաղեմ»: Ճշ. շրկ. աձ. «Յարեաւ Թրիստոս»: «Ս. Աստուած որ յարեար»: Ճշ. Ալէ. «Յարեաւ Աստուած»: Սրբ. «Ո՞վ Է որպես»: Զկսի սրբոյ Պատարագի նախատօնակարան: Ճրկ. աձ. «Այսօր յարեաւ» (իւր սարօքն): «Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր խաղաղու-

թեան»: Նաւակատիք: ճշ. ընթ.  
(Ա.Կր 15.1-11: Մտ 28.1-20):

Խ. Ճրագալոյց Ս. Զատկի

- 20 ✕ Կիր. ԱԶ. Ս. ԶԱՏԻԿ: ՏԾՆ ՅԱ-  
ՐՈՒԹԵԱՍ ՏԵԱՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒ-  
ՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ: Ի գիշերին հըս-  
կումն է Եւ դիցեն զսրբութիւնն ի  
Վերայ բազմոցին: Կանոնագլուխ  
ած. «Դատեա Տեր զայնոսիկ»:  
Օրի. ած. «Այսօր յարեաւ» (իւր  
սարօրն: Յատեանն): Իւղարերից  
Աւետարան Յարութեան մասն  
(Յայսմ Յինանց կիւրակէից  
Իւղարերից Աւետարան երից գլխոց  
զյտին փոխն կարոյն Եւ զՄատ-  
թեսինն՝ լման): Երգ՝ «Լուսապայ-  
ծառ իրեշտակն»: Իսկ յորժամ  
զՏեր յերկնիցի յետին տուն ասաս-  
ցեն, ամենեթեան համբուրեսցեն  
զմիմեանս ասելով. «Քրիստոս

յարեաւ ի մեռելոց: Ձեզ եւ մեզ  
մեծ աւետիս»: Թղզ. «Ասասցութ»:  
«Ս. Աստուած որ յարեար»: (Մինչեւ  
ի Յամբարձումն եղգ եւ Ս. Աստ-  
ուածն սոքա են): Շրկ. աձ. «Այսօր  
յարեաւ»: Գիրք. Սղմ. Ճիկ. «Յաս-  
եալ կային», Աւետարան: Եւ ապա  
ասասցեն զշարականս եւ ընթեռ-  
նուցուն զչորեսին Աւետարանս  
դեպ ի չորս կողմանս աշխարհի: Ա.  
շրկ. աձ. «Ընդ լուսանալ», «Օրթի»,  
Աւետ.: Բ. շրկ. ակ. «Առաքեցար ի  
Յորե»: Գ. շրկ. բձ. «Ի գերեզման  
քո»: Դ. շրկ. բկ. «Թո յարութեանդ»:  
Ապա դարձեալ Եկեսցեն յատեանն:  
Շրկ. աձ. «Որ զանարատ բա-  
զուկս»: Սղմ. Դ. «Նշանեցաւ»,  
Աւետ., Անդաստան: Ժմտ. «Քանզի  
յարեաւ»: Շրկ. դկ. «Յիսուս միա-  
ծին»: Ապա Սղմ. Ճիթ. «Եղիցին  
ականչք քո», Աւետ., «Յոզեֆոցն»:  
Չկնի՝ «Նորաստեղծեալ» (լման

ասա), «Խնդր.», «Թում ամենազօր Եւ հրաշալի յարութեանդ»: Ծրկ. բկ. «Խաչի քո Զրիստոս» ըստ Վերնոյ կարգին, բայց ասա՝ «Եւ զսուրբ թաղումնդ քո Մեծացուցանեմք, Եւ զսուրբ յարութիւնդ քո փառաւորեմք: Փառք Սուրբ խաչիդ»: Եւ եկեալ Երկուս-Երկուս համբուրեսցեն զսուրբ Խաչն Եւ զՎետարանն: Ճշ. Ժմտ. «Զրիստոս յարեաւ»: (Յայսմ շաբաթուժամամուտն այս է): Ճաշու Սղմ. Ճխե. «Գովեա Երուսաղեմ» (լման): Սրբ. «Ո՞վ է որպէս Տէր» (Յաւուրս յիսանց Սրբասացութիւնն այս է): Իսկ եթէ կամիս Վերաբերելով առնել, զսուրբ խորհուրդն յայլում սեղանի դիր: Եւ յորժամ քահանայն ասէ, «Տէր Աստուած օրինեցէ զամենեսեանդ», որու զ«Սաղմոն ասացեք»ն Եւ զաւուր սրբա-

սացութիւնն նախապէս ասա յորդոր. նոյնպէս եւ զ «Մի ոք յերախայից»ն, եւ զ «Մարմին տերունական»ն: Ապա գնացեալ առ այն սեղանն ուր սուրբ խորհուրդն է, սարկաւագունքն գոչեսցեն բարձր ծայնիւ՝ «Յարեւու Եհար գխորան իւր»: Դպիրքն երգեսցեն՝ «Եւ ցընծայ նա որպէս հսկայ»: Ապա սարկաւագաց պար առեալ՝ երգեսցեն բարձր ծայնիւ՝ «Որք զքրովբեիցն», եւ այլն ըստ կարգին:


Յերեկոյին՝ Գիրք, Սղմ. ճԱ. «Դու յարուցեալ», Աւետարան, Ասդաստան: Հմբ. աձ. ա. «Ընդ լուսանալ»: «Յայր գթած»: Սղմ. ճԽԵ. «Գովեա Երուսաղեմ», Աւետարան, «Խնկոր.», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: ճշ. ընթ. (Գրծ 1.15-26: Մը 16.1-8):

Լու. Ա. Զատիկ

- 21 **Ք Բ2. ԱԿ. Բ. օր Զատկի: ՅԻՇԱ- 22  
ՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:** Յայս շաբաթին  
Օրինութիւնն՝ զյարութեան Տէր  
յերկնիցը ասա 'ի ձայնէն, զկսի  
Հոգւոյ Գալստեանն, եւ այլն ըստ  
կարգին: Օրի. ակ. «Առաքեցար ի  
Յօրե»: Յոց. հնգ. ած. «Օրինեալ եւ  
դու Ծրիստոս» (իւր սարօթն): (Եւ  
այլն ամենայն յարութեան է): Յոզ.  
«Ասացուք»: Առաւօտու Սղ. ԿԴ.  
«Քեզ Վայելէ», Աւետարան: Յե-  
րեկոյին առաջին Սղ. ԿԴ. «Քեզ  
Վայելէ»: Յմբ. ակ. ա. «Առաքեցար  
ի Յօրե»: Արձակման Սղ. ՃԽԵ.  
«Գովեա Երուսաղեմ»:  
Յայս Յիևանց՝ յառաւօտուն եւ  
յերեկոյին Կեցն ասա, բայց զԱ-  
րարչութեան Երգն մի' ասեր, այլ  
զՆորաստեղծեան ասա 'ի Կիւրա-  
կեն: ճշ. ընթ. (Գրծ 2.22-41: Ղկ  
24.1-12):

Հայկական տոմարաւ՝

Ս.հեկան, 30 օր



Միջին ամիս գարնանային

Վերջին քառորդ լուսնի  
Զուարթագին եւ ախորժելի օդ

- 22 **Գ2. Բ2. Գ. օր Զատկի:** Օրի. թձ. «Ի 23  
գերեզման քո»: Յրց. յար. ած. թ.  
«Պայծառացիր Եկեղեցի»: Առաւո-  
տու եւ երեկոյի առաջին Սղ. Ե.  
«Տեր որպես զինու»: Յմբ. թձ. ա.  
«Ի գերեզման քո կանխեցին»:  
Արձակման Սղ. Ի. «Տեր ի զօրու-  
թեան»: Ծ2. ընթ. (Գրձ 2.42-3.21:  
Ղկ 24.13-35):
- 23 **Դ2. ԲԿ. Դ. օր Զատկի:** Օրի. գձ. 24  
«Իւղաբեր եւ սուրբ կանայքն»:  
Յրց. յար. ած. դ. «Ըսդ Երիս ման-  
կունսն»: Առաւոտու եւ երեկոյի

առաջին Սղ. ՂԸ. «Բարձր արարեք»: Յմբ. գծ. ա. «Խողաբեր եւ սուրբ կանայքն»: Արձակման Սղ. ԺԴ. «Տեր ո՞վ կացցե»: Ապա նախատօնակ արա: Ծրկ. դկ. դրձ. «Յրաշացան պակուցմամբ բազմութիւնք» (իւր սարօքն): Զրգ. «Ո. ճգնաւորօքն»: Աղթ. «Պասկիչ սըրբոց»: Ճշ. ընթ. (Գրծ 4.13-31: Յկ 1.13-27: Մտ 5.1-12):

- 24 ✕ Եշ. ԳՁ. Ե. օր Զատկի: (Սրբոց 25 Նահատակացն, որը կատարեցան յըՆթացս Յայոց Թեղասպանութեան վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց): Օրի. դկ. «Յրաշացան պակուցմամբ բազմութիւնք» (յատեանն): Յրց. ակ. դրձ. «Որ հաստատեցեր զՅայաստան»: Յմբ. ակ. դրձ. «Ով Երանեալ սուրբ վկայք»: Ճշ. ընթ. (Գրծ 4.13-31: Յկ 1.13-27: Մտ 5.1-12):

- 25 Ուր. ԳՎ. Զ. օր Զատկի:** Օրի. գկ. «Յարեաւ Տերն»: Յոց. յար. ած. Ե. «Լոյսդ որ ի հրեղէն աթռո»: Արաւօտու Եւ երեկոյի առաջին Սղ. ՂԵ. «Տեսին ամենայն»: Յմբ. գկ. ա. «Յարեաւ Տերն»: Արձակման Սղմ. ՂԲ. «Տեր թագաւորեաց»: Ծշ. ընթ. (Գրծ 4.32-5.11: Յկ 2.1-13: Յհ 21.1-14):
- 26 ԾԲ. ՂԶ. Է. օր Զատկի:** Յիշատակ գլխատման սրբոյն Յովիաննու Մկրտչին: Օրի. դճ. «Փառաբանակից»: Թագ. յաւ. «Այսօր դասք»: Յոց. ած. «Նախայաւիտեան» (իւր սարօթն: Եւ այլն ամենայն ինչ յարութեան Է): ԱլԵ. «Դու մանուկ մարզարե»: Աւետ., «Կեցո»: Ժմտ. «Ջրիստոս յարեաւ»: Յերեկ. առաջին Սղմ. ԿԶ. «Աստուած ողորմեաց» Եւ արձակման՝ Զ. «Յընծացեք առ Աստուած»: (Մինչեւ
- 26

ցՅամբարձումն ծաբաթ երեկոյի  
սաղմոսք սոքա են): «Լոյս զը-  
լարթ»: Մես. գալստեան: «Ս. Աստ-  
ուած որ Եկիր եւ գալոցդ են»: Յմբ.  
աճ. «Որ վերօրինիս» (2 պատկեր):  
«Խնդր.», «Կեցո», «Ջում ամենա-  
զօր եւ հրաշալի գալստեանդ»: Ծշ.  
ընթ. (Գրծ 5.12-33: Յկ 2.14-26: Յհ  
21.15-25):

- 27 ✧ Կիր. ԴԿ. Բ. օր Զատկի: ՆՈՐ 28  
**ԿԻՒՐԱԿԵ (ԿՐԿՆԱՉԱՏԻԿ):** Ի գի-  
շերին հսկումն է: Կանոնագլուխ՝  
«Օրինեա անձն իմ զՏեր» (որպես  
ի Բուն Բարեկենդասի գիշերին):  
Օրի. դկ. «Նորոգեալ կղզիք» (իւր  
սարօթ: ՇԱԼԱԳ օրինութիւնն կից  
ընդ աւուր օրինութեանն երգել՝  
որպես քաղուածք): Առաւօտու Սղ.  
ԶԴ. «Ցոյց մեզ Տեր»: (Մինչեւ 'ի  
Յամբարձումն առաւօտու սաղմոնն  
այս ե): Ալետարան, «Նորաստեղծ-

Եալ»: Թրզ. «Խնդրեսցուք», «Կեցո», «Թում ամենազօր»: Ծմն. «Թրիստոս յարեաւ»: (Մինչեւ 'ի Յամբարձումն յամենայն Կիւրակէի եւ ի Շաբաթու զԹրիստոս յարեաւն ասա, եւ ի միս աւուրսն՝ զ«Ահաւր»ն եւ զ«Թանգի յարեաւ»ն): Յերեկոյին առաջին Սղ. ճԽթ. «Օրինեցէք զՏեր յօրինութիւն ի նոր» (Մինչեւ 'ի Յամբարձումն առաջին սաղմոսն այս է): Աւետարան, Անդաստան: Ապա «Խոնարհեցո» եւ «Ապրեցո»: Յմբ. յար. դկ. ա. «Յորժամ եկին ի գերեզմանն»: Սղ. ճԾ. «Օրինեցէք զԱսուուած ի սրբութեան նորա» (Մինչեւ 'ի Յամբարձումն արձակման սաղմոսն այս է): Աւետարան, «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: (Ըոյլպէս ասա յամենայն աւուրս բաց ի Շաբաթ): ճշ. ընթ. (Գրծ 5.34-6.7: Յկ 3.1-12: Յհ 1.1-17):

Անկաստեղ

Հանդիսաւոր հոգեհանդիսա  
վասն հոգւոցն Արամի եւ Պերճու-  
հիի, եւ Գուտույեան Պարոյրի եւ  
Թագուհիի՝ ծնողաց բարերարացն  
Ս. Աթոռոյս Ալեքքօ եւ Անի Պէզիք-  
եանի:

(՞՞) Ծնունդ լուսնի

Պայծառ եւ զովագին օդ

- 28 Բ2. ԱԶ. Թ. օր Յինանց: Յոց. ակ. 29  
ա. «Որ Եկիր ի փրկութիւն»: Յմբ.  
աձ. բ. «Փառք յարութեան քո Տեր»:  
Այսօր սկիզբն արա ընթեռնուլ  
զշորս գլուխ աւետարանսն կար-  
գաւ. զԴուկասուն յառաւօտուն, եւ  
զՅովիանսուն ի ճաշուն, զՄատ-  
թենսին յԵրեկոյին առաջին, եւ  
զՄարկոսին յարձակման, զի մին-

չեւ՝ ի Յոգեգալուսոն վերջացուսցես զշորեսին աւետարանսն մինչեւ՝ ի չարչարանաց ճառսն: Ճշ. ընթ. (Ղկ 4.31-41: Գրծ 6.8-7.29: Յկ 3.13-4.6: Յհ 1.18-28: Մտ 4.12-25: Սր 1.14-20):

- 29 **Գ2. ԱԿ. Ժ. ՕՐ ՅԻՆԱՆԻ:** Յրց. ակ. թ. «Որ վասն մերոյ փրկութեան»: Յմբ. ակ. թ. «Յարուցեալ Տերն ի գերեզմանեն»: Ճշ. ընթ. (Ղկ 4.42-5.11: Գրծ 7.30-8.2: Յկ 4.7-17: Յհ 1.29-34: Մտ 5.1-16: Սր 1.12-34):

Խալամական տոմարաւ՝  
Զու-էլ-գաատէ, 30 օր

- 30 **Դ2. ԲԶ. ԺԱ. ՕՐ ՅԻՆԱՆԻ:** Յրց. ակ. թ. գ. «Անսկիզբն Բանդ Աստուած»: Յմբ. թձ. թ. «Եկին ի գերեզմանն»: Ճշ. ընթ. (Ղկ 5.12-16: Գրծ 8.3.13: Յկ 5.1-11: Յհ 1.35-42: Մտ 5.17-48: Սր 1.35-45):



## ՄԱՅԻՍ

31

- |   |  |   |
|---|--|---|
| 1 | <b>Եշ. ԲԿ. ԺԲ. օր Յինանց:</b> Յոց. ակ.<br>դ. «Որ յաթոռ փառաց նստիս»:<br>Յմբ. թկ. ա.,թ. «Ձո յարութեանդ<br>փառք վայելէ» Եւ «Ձրիստոս յար-<br>եաւ ի մեռելոց»:                          | 3 |
| 2 | <b>Ուր. ԳԶ. ԺԳ. օր Յինանց:</b> Յոց. ակ.<br>ե. «Անեղանելիդ Աստուած»: Յմբ.<br>գձ. թ.,գ. «Այսօր յարութիւն Ձրիս-<br>տոսի» Եւ «Ի խաչանիշ փայտեն»:<br>Ճշ. ըսթ. (Ղկ 5.27-39: Գրծ 8.26-40: | 4 |

Ա.Պտ 1.1-12: Յի 2.1-11: Մտ 6.22-34: Մր 2.13-22):

- 3 **Ծբ. գկ. ժԴ. օր Յիսակ:** Յրց. թձ. ա. «Որ ի յերկնից իշեր»: Յերեկոյի առաջին Սղ. ԿԶ. «Աստուած ողորմեա»: Մես. զալստեան: «Ս. Աստուած որ Եկիր եւ զալոցդ ես»: Յմք. դձ. «Թագաւոր գոլով» (զչորեսին շարականն եւս ասա): Վրձակման Սղ. Զ. «Ցնծացեք առ Աստուած»: Աւետարան, «Խնդրեսցուք», «Կեցո», «Քում ամենազօր գալըստեանդ»: ՃԶ. ընթ. (Ղկ 6.1-11: Գրծ 9.1-22: Ա.Պտ 1.13-25: Յի 2.12-22: Մտ 7.1-8.17: Մր 2.23-3.5):
- 4 **✖Կիր. ԴԶ. Գ. ԺԵ. օր Յիսակ:** ԱԾ-ԽԱՐՅԱՍՏՐԱՆ (ԿԱՆԱՉ ԿԻՒՐԱԿԵ): Յրց. գձ. «Երկրպագեմք քեզ Թրիստոս»: Զկսի «Ս. Աստուած»ին թափօր: Ծրկ. գձ. «Լուսաւորեա Երուսաղեմ», Գիրք, ԱլԵ. Սղ. ԶԶ.

«Յիմունք Նորա», Աւետարան, Անդաստան, «Ս. Խաչիս»: Ապա առաւօտու Աւետարան, «Նորաստեղծեալ», «Կեցո»: Յմբ. յար. դձ. ա.թ. «Փառաբանակից Յօր Որդի» եւ «Կանանց կանխելով ի թաղումն»: Ծշ. ընթ. (Ղկ 6.12-49: Գրծ 9.23-31: Ա.Պտ 2.1-10: Յհ 2.23-3.12: Մտ 8.18-9.8: Մր 3.6-12):

 Առաջին ժառորդ լուսնի  
Բարեխառն եղանակ

- |   |  |
|---|--|
| 5 | <b>Բ2. ԴԿ. ԺԶ. ՕՐ ՅԻՆԱՆՑ:</b> Յրց. բձ. 7<br>բ. «Անապական բանդ Աստուած»:<br>Յմբ. դկ. բ. «Եջ հրեշտակն յերկնից»: Ծշ. ընթ. (Ղկ 7.1-10: Գրծ 9.32-43: Ա.Պտ 2.11-17: Յհ 3.13-21:<br>Մտ 9.9-17: Մր 3.13-19): |
| 6 | <b>Գ2. ԱԶ. ԺԷ. ՕՐ ՅԻՆԱՆՑ:</b> Յրց. բձ. 8<br>գ. «Որ թագաւորդ ես յափտենից»:  |

Յմբ. աձ. գ. «Ըստ կանայմն իւղաբերման»: ճշ. ընթ. (Ղկ 7.11-35: Գրծ 10.1-23: Ա.Պտ 2.18-25: Յհ 3.22-36: Ստ 9.18-26: Մր 3.20-30):

- |   |   |
|---|---|
| 7 | <b>Դշ. ԱԿ. ԺՀ. օր Յինանց:</b> Յրց. թձ. 9<br>դ. «Այսօր բենուեալ քո ի խաչին»:<br>Յմբ. ակ. գ. «Սքանչելի հրեշտակն Տեառն»: ճշ. ընթ. (Ղկ 7.36-50: Գրծ 10.24-48: Ա.Պտ 3.1-9: Յհ 4.1-23: Ստ 9.27-34: Մր 3.31-35):   |
| 8 | <b>Եշ. ԲԶ. ԺԹ. օր Յինանց:</b> Յրց. թձ. 10<br>ե. «Որ գթացար ի սուրբ մանկունսն»: Յմբ. թձ. գ. «Զայն աւետաւոր հրեշտակին»: ճշ. ընթ. (Ղկ 8.1-21: Գրծ 11.1-26: Ա.Պտ 3.10-22: Յհ 4.24-42: Ստ 9.35-10.15: Մր 4.1-9): |
| 9 | <b>Ուր. ԲԿ. Ի. օր Յինանց:</b> Յրց. թձ. զ. 11<br>«Որ զարդարեալ նորացուցեր»:<br>Յմբ. թկ. գ. «Առաւօտեան սուրբ կանայքն»: ճշ. ընթ. (Ղկ 8.22-56:  |

- Գրծ 11.27-12.24: Ա.Պտ 4.1-11: Յհ  
4.43-54: Մտ 10.16-40: Մր 4.10-20):  
10 **Ծբ. ԳԶ. ԻԱ. օր Յիսանց:** Յրց. թկ. 12  
ա. «Որ յերկնային զիսուրութեան-  
ցըդ»: Յերեկոյի առաջին Սղ. ԿԶ.  
«Աստուած ողորմեա»: Մես. գա-  
լըստեան: «Ս. Աստուած որ Եկիր եւ  
գալոցդ ես»: Յմբ. աձ. «Որ վերօրի-  
նիս»: Արձակման Սղ. Զ. «Յնծացէք  
առ Աստուած»: «Խնդրեսցուք»,  
«Կեցո», «Թում ամենազօր գա-  
լըստեանդ»: Ճշ. ընթ. (Ղկ 9.1-17:  
Գրծ 12.25-13.15: Ա.Պտ 4.12-19: Յհ  
5.1-18: Մտ 11.1-24: Մր 4.21-25):  
11 **Ք Կիր. ԳԿ. Դ. ԻԲ. օր Յիսանց:** 13  
**(ԿԱՐՍԻՒՐ ԿԻՒՐԱԿԵ):** Յրց. թկ. թ.  
«Անսկիզբն Աստուած եւ ամենա-  
զօր»:  
Յերեկոյին Աւետարան, ապա թա-  
փոր: Շրկ. Խաչի գկ. «Ով քառա-  
թեւ»: Սաղմոս Դ. «Նշանեցաւ»,

Աւետարան, Ալդաստան, «Ա. Խաչիս», «Պահպանեա»: Ապա «Խոնարհեցո» եւ «Ապրեցո»: Յմբ. յար. գկ. թ. «Չաստուածային զգերեզմանաւ»: Ճշ. ընթ. (Ղկ 9.18-36: Գրծ 13.16-43: Ա. Պտ 5.1-14: Յհ 5.19-30: Մտ 11.25-30: Մր 4.26-34):

*Հանդիսաւոր հոգեհանդիստ  
վասն հոգւոյն Վահրամայ իւթիւճեանի՝ բարերարին Կաթողիկոսարանի Ս. Նահատակաց յուշարձանմատրան, եւ վասն հոգւոյն ծնողացն իւրոյ Արիսողոմայ եւ Վերգինեայ եւ համայն ննջեցելոցն իւթիւճեան գերդաստանի:*

- 12 Բ2. Դ2. Ի4. օր Յինաւց: Յրց. թկ. 14  
գ. «Որ զծառայի զկերպարանս»:  
Յմբ. դձ. դ. «Որ ի վերդ ես քան զմիտս»: Ճշ. ընթ. (Ղկ 9.37-50: Գրծ 13.44-14.6: Բ. Պտ 1.1-11: Յհ 5.31-47: Մտ 12.1-21: Մր 4.35-5.20):

 Լրումն լուսնի  
Պարզ եւ հանելի օդ

- 13 **Գ2. ԴԿ. ԻԴ. օր Յիսակ:** Յրց. թկ. 15  
 դ. «Որ էիր յառաջ»: Յմբ. դկ. գ.,դ.  
 «Յրեշտակացն դասք» եւ «Յրեշ-  
 տակ քո Տեր»: Ճշ. ընթ. (Ղկ 9.51-  
 62: Գրծ 14.7-17: Բ.Պտ 1.12-19:  
 Յհ 6.1-14: Ստ 12.22-37: Մր 5.21-  
 34):
- 14 **Դ2. ԱԶ. ԻԵ. օր Յիսակ:** Յրց. թկ. 16  
 Ե. «Կամաւորութեամբ Եկիր»: Յմբ.  
 ած. դ. «Որ անձառ Էութեամբ»:  
 Ճշ. ընթ. (Ղկ 10.1-24: Գրծ 14.18-27:  
 Բ.Պտ 1.20-2.8: Յհ 6.15-21: Ստ 12.  
 38-50: Մր 5.35-43):
- 15 **Ե2. ԱԿ. ԻՀ. օր Յիսակ:** Յրց. գձ. 17  
 ա. «Փառաւորեմք զքեզ Տեր Աստ-  
 ուած»: Յմբ. ակ. դ. «Յրաշալի զյա-  
 րութիւն»: Ճշ. ընթ. (Ղկ 10.25-42:

- Գրծ 15.1-29: Բ.Պտ 2.9-22: Յհ 6.22-38: Մտ 13.1-23: Մր 6.1-6):
- 16 Ուր. ԲԶ. ԻԵ. օր Յիսանց:** Յրց. գձ. 18  
թ. «Փառաւորեալ Որդի Աստուծոյ»:  
Հմբ. բձ. դ. «Այսօր զուարճացան  
տիեզերք» (ցվերջն): Ճշ. ընթ. (Ղկ  
11.1-13: Գրծ 15.30-16.5: Բ.Պտ 3.1-  
9: Յհ 6.39-72: Մտ 13.24-35: Մր  
6.7-13):
- 17 Ծբ. ԲԿ. ԻԸ. օր Յիսանց:** Յրց. գձ. 19  
գ. «Որ յափունից ես Աստուած»:  
Յերեկոյի առաջին Սի. Կ2. «Աստ-  
ուած ողորմեա»: Մես. զալստեան:  
«Ս. Աստուած որ եկիր եւ գալոցդ  
ես»: Հմբ. դձ. «Թագաւոր գոլով»:  
Արձակման Սի. Զ. «Յնծացեք առ  
Աստուած»: «Խնդրեսցութ», «Կե-  
ցո», «Քում ամենազօր գալըստ-  
եանդ»: Ճշ. ընթ. (Ղկ 11.14-32: Գրծ  
16.6-40: Բ.Պտ 3.10-18: Յհ 7.1-13:  
Մտ 13.36-52: Մր 6.14-29):

- 18 ✕ Կիր. ԳԶ. Ե. ԻԹ. օր Յինանց: 20  
ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ: Աւետարան Տաճարի: Չկնի «Ռահ գործեալ»ին երգ՝ «Ուրախացան»:  
Աւագ Օրի. ի ձայնեն: Ալելուք յարութեան: Յրց. Խաչի դձ. «Վյսօր ընդ ամպս լուսաւորս» (ԲՀ. աւուրս): Մեծ. դձ. «Մայր լուսոյ»:  
Առաւօտու երգ՝ «Ետուր երկիւղածաց»: «Ս. Վստուած որ խաչեցար»: Վպա թափօր: Շրկ. դձ. «Զօրութիւն սուրբ խաչի»: Ըսթեռնուն զթուղթ Կիւրողի՝ «Թագաւորի աստուածասիրի»: Գիրք, Ալբ. Սղ. Դ. «Նշանեցաւ»: Աւետարան, Անդաստան, «Ս. Խաչիս», «Պահպանի»:  
Վպա առաւօտու Աւետարան, «Նորաստեղծեալ», «Կեցո»: (Եւ այլն ամենայն ինչ յարութեան է):  
Յերեկոյին՝ Աւետարան, թափօր, շրկ. գձ. «Փայտ կենաց»: Սղ. Դ.

«Նշանեցաւ», Ալետարան, Անդաստան, «Պահպանիչ»: Ապա «Խոնարհեցո» եւ «Վարեցո»: Յմբ. յար. գձ. դ., ե. «Փառաւորեալ է քո յարութիւնդ» եւ «հ ձայն ահեղ յարութեան քո»: ճշ. ընթ. (Գդ 6.14-18: Ղկ 11.33-12.12: Գրծ 17.1-15: Ա.Յի 1.1-10: Յի 7.14-24: Ստ 13. 53-58: Մր 6.30-44):

- 19 **Բ2. ԳԿ. Լ. օր Յինակ:** Յրց. գձ. դ. 21  
«Կամաւորութեամբ Եկիր»: Յմբ.  
գկ. գ., դ. «Զքո յարութիւնդ օրինեմբ» եւ «Անեալ եւ մեր զօրինութիւնս»: ճշ. ընթ. (Ղկ 12.13-31: Գրծ 17.16-34: Ա.Յի 2.1-6: Յի 7.24-36:  
Ստ 14.1-12: Մր 6.45-56):
- 20 **Գ2. ԴԶ. ԼԱ. օր Յինակ:** Յրց. գձ. 22  
ե. «Վրարիչ արարածոց Թրիստոս»:  
Յմբ. դձ. ե. «Զյարութիւն Աստուածորդույն» (ցվերջն): ճշ. ընթ. (Ղկ 12.32-48: Գրծ 18.1-11: Ա.Յի 2.7-17:

Յհ 7.37-8.11: Մտ 14.13-21: Մր 7.1-16):

 Վերջին քառորդ լուսնի

Պարզ օդ, պայծառ եւ գովագին

- 21 **Դ2. ԴԿ. ԼԲ. օր Յիսանց:** Յրց. գկ. 23  
ա. «Անձառելի ընութիւն եւ բան»:  
Յմբ. դկ. Ե. «Փառք յարութեան քո  
Տեր» (ցվերջն): ճշ. ընթ. (Ղկ 12.49-  
13.9: Գրծ 18.12-28: Ա.Յհ 2.18-23:  
Յհ 8.12-20: Մտ 14.22-36: Մր 7.17-  
30):

Հայկական տոմարաւ՝  
Մարերի, 30 օր

- 22 **Ե2. ԱԶ. ԼԳ. օր Յիսանց:** Յրց. գկ. 24  
բ. «Սահմայակիտեան Որդի»: Յմբ.  
ած. Ե. «Սոսկալի տեսիլ» (ցվերջն):  
ճշ. ընթ. (Ղկ 13.10-21: Գրծ 19.1-20:  
Ա.Յհ 2.24-25: Յհ 8.21-30: Մտ 15.1-  
20: Մր 7.31-37):

⊗ Յերկաւորն

Կերչին ամիս գարնանային

- 23 **Ուր. ԱԿ. ԼՂ. օր Յինանց:** Յոց. գկ. 25  
գ. «Այսօր զենաւ մեզ պատարագ»:  
Հմբ. ակ. ե. «Երգեսցուք քեզ ընդ  
հրեշտակս» (ցվերջն): ճշ. ընթ. (Ղկ  
13.22-35: Գրծ 19.21-40: Ա.Յհ 2.26-  
28: Յհ 8.31-59: Մտ 15.21-28: Մր  
8.1-9):
- 24 **ԾԲ. ԲԶ. ԼԵ. օր Յինանց:** Յոց. դձ. 26  
ա. «Որ եկիր կամաւ Յօր ի խաչ»:  
Յերեկոյին առաջին Սղ. ԿԶ. «Աստ-  
ուած ողորմեա»: Մես. գալըստ-  
եան: «Ո. Աստուած որ եկիր եւ գա-  
լոցր ես»: Հմբ. աձ. «Որ Վերօրի-  
նիս յաթոռս»: Արձակման Սղ. Զ.  
«Ցնծացեք առ Աստուած»: «Խընդ-  
րեսցուք», «Կեցո», «Քում ամենա-  
զօր գալստեանդ»: ճշ. ընթ. (Ղկ  
14.1-24: Գրծ 20.1-16: Ա.Յհ 2.28-

3.1: Յհ 9.1-38: Մտ 15.29-16.12: Մր  
8.10-26):  
25 **❖ Կիր. ԲԿ. ԶԼ. օր Յիսանց:** 27  
Յրց. դժ. թ. «Որ բարեբանեալդ ես  
ի դասոց»:  
Յերեկոյին՝ Աւետարան, թափօր:  
Ծրկ. թկ. «Խաչն կենարար»: Զկնի  
Սղ. Դ. «Նշանեցաւ», Աւետարան,  
Անդաստան, «Պահպանիչ»: Ապա  
«Խոնարհեցո» եւ «Լարեցո»: Յմբ.  
յար. թկ. դ. «Կանխեցին կանայքն»  
(ցվերջն): Ծշ. ընթ. (Ղկ 14.25-15.32:  
Գրծ 20.17-38: Ա.Յհ 3.2-6: Յհ 9.39-  
10.10: Մտ 16.13-17.13: Մր 8.27-  
9.12):

**ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ**  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄԱՅ  
ԱՌԱՋՆՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՄԵԾԻ ՏԱՍՏ ԿԻԼԻԿԻՈՅ  
Կատարի Հոգեհանգիստ վասն  
Խաղաղութեան Հոգւոց քաջամար-

տիկ զաւակացն ազգիս հայոց, որք  
անկան՝ ի ճակատամարտին Սար-  
դարապատի եւ յայլ ճակատա-  
մարտս՝ ի թուին 1918, վասն ազա-  
տութեան ազգիս հայոց:

- 26 **Բ2. ԳԶ. ԼԵ. օր Յիսանց:** Յրց. դձ. 28  
գ. «Որ ի քառակերպեան նստիս»:  
Յմբ. գձ. գ. «Յուշալի յարութիւնն»  
(ցվերջն): ճշ. ընթ. (Ղկ 16.1-31: Գրծ  
21.1-14: Ա.Յհ 3.7-10: Յհ 10.11-21:  
Ստ 17.14-20: Մր 9.13-28):
- 27 **Գ2. ԳԿ. ԼԸ. օր Յիսանց:** Յրց. դձ. 29  
դ. «Յորժամ ի խաչին բեւեռեցար»:  
Յմբ. գկ. ե. «Տեսիլ փայլակնաձեւ»  
(ցվերջն): ճշ. ընթ. (Ղկ 17.1-19: Գրծ  
21.15-26: Ա.Յհ 3.10-20: Յհ 10.22-  
42: Ստ 17.21-18.9: Մր 9.29-49):

 Ծնունդ լուսնի  
Սկիզբ տօքոյ

- 28 **Դ2. ԴԹ. ՕՐ ՅԻՆԱԿԻ:** Հրց. դձ. 30  
Ե. «Միածին որդի Աստուծոյ»: Յմբ.  
դձ. գ. «Ահազին ծայնիւդ քո Զրիս-  
տոս»: Ճշ. ընթ. (Ղկ 17.20-37: Գրծ  
21.27-36: Ա.Յհ 3.21-4.6: Յհ 11.1-  
46: Մտ 18.10-35: Մր 10.1-12):
- 29 **Ք Ե2. ԴԿ. Խ. ՕՐ ՅԻՆԱԿԻ:** ՏՕՆ 1  
**ՂԱՄԲԱՐՁՄԱՆ ՏԵԱՌՈՒՅԻՆՈՒՄԸ ԵՐԻՍՏՈՍԻ:** Զկսի  
«Աստուած անեղ»ին երգ՝ «Թագա-  
լոր փառաց»: Յետ. շրկ. դկ. «ՄԵ-  
ծահրաշ»: Օրի. դձ. «Դամբարձաւ»  
(յատեան, իւր սարօթն): Երգ՝  
«Չյարութիւն» եւ «Դամբարձաւ»:  
Քրզ. «Ասացուք»: «Ս. Աստուած  
որ համբարձար փառօք առ Յայր»:  
(Մինչեւ ՚ի Յոգույ գալուստն երգ,  
քարոզ եւ Ս. Աստուած սորա են):  
Ապա ելցեն ի թափօր: Շրկ. դձ.  
«Դամբարձաւ»: Գիրք, Ալ. Սղ. ԽԶ.  
«Դամբարձաւ Աստուած», Աւետա-

րան, Անդաստան, «Պահպանիչ»:  
Սաղմոս ծայսիւ ԻԳ. «Յամբարձեք»:  
Աւետարան, «Խնդրեսցուք», «Զում  
ամենազօր համբարձմանդ»: Ժմտ.  
«Յիացան Վերնականք» եւ «Որ  
անպատում»: Սրբ. «Ո՞վ է որպես»:  
Յերեկոյին՝ թափօր: Շրկ. դժ.  
«Յամբարձաւ Տերն մեր Քրիստոս»:  
Գիրք, Աւետարան, Անդաստան,  
«Պահպանիչ»: Սղ. ԽԶ. «Յամբար-  
ձաւ Աստուած», Աւետարան: Վպա  
«Խոնարհեցո» եւ «Վպրեցո»: Յմբ.  
դժ. «Որք տնկակից» եւ «Յամբար-  
ձաւ Տերն մեր յերկիխնս»: Արծակ-  
ման Սղ. ԻԳ. «Յամբարձեք իշ-  
խանք»: (Միևնույն ի Յոգոյ գալուս-  
տըն արձակման սաղմոսն այս է):  
«Կեցո», «Թագաւոր խաղաղու-  
թեան»: Ճշ. ընթ. (Ղկ 18.1-14: Գրծ  
1.1-14: Սս 28.16-20: Սս 19.1-15:  
Սր 10.13-27):

Խո. Համբարձումն  
Խպամական տոմարաւ՝  
Զու-Էլ-Հեթէ, 30 օր

- |   |  |   |
|---|--|---|
| 30  | <b>Ուր. ԱԶ. ԽԱ. օր Յինանց: Սկիզբն</b>  | 2 |
| <b>Պահոց:</b> Յրց. դճ. գ. «Ծագումն միածնի Որդուոյ»: Առաւտու Սղ. ԽԶ. «Համբարձաւ» (Մինչեւ 'ի Հոգւոյ գալուստն առաւտու եւ Երեկոյի առաջին սաղմոսն այս է): Ճշ. շրկ. դկ. «Որ ողորմութեամբ»: Յմք. դճ. «Որը տնկակից» եւ «Համբարձաւ Տերն մեր Քրիստոս»: Ճշ. ընթ. (Ղկ 18.15-34: Գրծ 21.37-22.29: Ա.Յհ 4.7-21: Յհ 11.47-54: Մտ 19. 16-20.16: Մր 10.28-32): |  |   |
| 31  | <b>Ճք. ԱԿ. ԽԲ. օր Յինանց:</b> Յրց. դճ. Ե. «Փառաւորելով զանուն քո»: Ճշ. շրկ. դկ. «Իշխանութիւնը»: Յերեկոյին Մես. զալստեան: «Ս. Աստուած որ Եկիր եւ գալոցդ ես»: Յմք. | 3 |

O. 116

ՄԱՅԻՍ

L.

դճ. «Թագաւոր գոլով»: Աւետարան, «Խնդրեսցուք», «Կեցո», «Քում ամենազօր գալստեանդ»:  
Ճշ. ընթ. (Ղկ 18.35-19.28: Գրծ 22.30-23.11: Ա.Յհ 5.1-12: Յհ 11.55-12.11: Մտ 20.17-28: Մդ 10.33-45):

0.

ՅՈՒՆԻՍ

117 L.



## ՅՈՒՆԻՍ

30

- 1 Ք Կիր. ԲԶ. Ե. ԽԳ. օր Յիսանց: 4  
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱՉԱՐԴ: Յետ.  
շրկ. դձ. «Համբարձաւ Տերև մեր  
յերկինս»: Օրի. դկ. «Մեծահրաշ  
այս խորհուրդ» (իւր սարօթն): Զկնի  
«Ս. Աստուած»ին ելցեն ի թափօր:  
Ծրկ. դձ. «Թագաւոր գոլով», զիրք,  
Ալե. «Օրինեալ Եկեալ անուամբ  
Տեառն», Աւետարան, Անդաստան,  
«Պահպանիչ»: «Նորաստեղծեալ»,

«Խնդրեսցուք», «Թում ամենազօր գալստեանդ»: Ժմտ. «Յիացան»:  
 ճշ. շրկ. դժ. «Չգալուստ քո քրիստոս»: Ալբ. Սղ. ԻՂ. «Յամբարձեք»:  
 Յերեկոյին՝ Ալետարան, ապա  
 ելցեն ի թափօր: Շրկ. բժ. «Ապա-  
 լինեցաք ի խաչ քո»: Սաղմոս Դ.  
 «Նշանեցաւ», Ալետարան, Անդաս-  
 տան, «Պահպանիչք»: Ապա «Խո-  
 նարհեցո» եւ «Ապրեցո»: Մես. յա-  
 րութեան: Յմբ. դժ. «Որք տնկակից»  
 եւ «Յամբարձաւ Տէրն մեր յեր-  
 կինս»: Արձակման Ալետարան,  
 «Կեցո», «Թագաւոր խաղաղու-  
 թեան»: ճշ. ընթ. (Ղկ 19.29-48: Գրծ  
 23.12-35: Ա.Ցհ 5.13-21: Ցհ 12.12-  
 23: Մտ 20.29-21.17: Մր 10.46-  
 11.11):

- 2 **Բ2. ԲԿ. ԽՂ. օր Յինանց:** Յոց. դկ. 5  
 ա. «Որ զամենազօր զօրութիւնդ»:  
 ճշ. շրկ. աժ. «Որ համբարձաւն»:

Յմբ. դձ. «Որք տնկակից» եւ «Յամբարձաւ Տերև մեր Թրիստոս»: ճշ. ընթ. (Ղկ 20.1-8: Գրծ 24.1-26: Բ.Յհ 1.1-13: Յհ 12.24-26: Մտ 21.18-32: Մր 11.12-26):

- 3 **Գ2. Գ2. ԽԵ. ՕՐ ՅԻՆԱԼԻ:** Յրց. դկ. 6  
թ. «Այսօր ցնծան երկինք»: ճշ. շրկ.  
դկ. «Որ ողորմութեամբ»: Յմբ. դձ.  
«Որք տնկակից» եւ «Յամբարձաւ  
Տերև մեր յերկինս»: ճշ. ընթ. (Ղկ  
20.9-19: Գրծ 24.27-25.12: Բ.Յհ 1.1-  
15: Յհ 12.27-43: Մտ 21.33-46: Մր  
11.27-12.17):

 Առաջին ժառորդ լուսնի  
Պայծառ եւ չերմ'

- 4 **Դ2. ԳԿ. ԽԶ. ՕՐ ՅԻՆԱԼԻ: ՊԱՀՔ:** 7  
Յրց. դկ. գ. «Փառաւորեալ է անուն  
քո»: ճշ. շրկ. դկ. «Իշխանութիւնք»:  
Յմբ. դձ. «Որք տնկակից» եւ «Յամ-

O. 120

ՅՈՒՆԻՍ

L.

բարձաւ Տերն մեր Յրիստոս»: ճշ.  
ընթ. (Ղկ 20.20-26: Գրծ 25.13-22:  
Յդ 1.1-7: Յհ 12.44-50: Մտ 22.1-  
14: Մր 12.18-34):

- 5 **Եշ. ԴԶ. ԽԵ. օր Յիսանց:** Յրց. դկ. 8  
դ. «Որ յառաջ քան զարեւ»: ճշ.  
շրկ. աձ. «Որ համբարձաւն»: Յմք.  
դձ. «Որք տնկակից» եւ «Յամբար-  
ձաւ Տերն մեր յերկիխս»: ճշ. ընթ.  
(Ղկ 20.27-21.4: Գրծ 25.23-26.32:  
Յդ 1.8-15: Յհ 13.1-15: Մտ 22.15-  
46: Մր 12.35-44):
- 6 **Ուր. ԴԿ. ԽԸ. օր Յիսանց: Պահք:** 9  
Յրց. դկ. ե. «Ասսկիզբն Բանդ որ  
յանձառ»: ճշ. շրկ. դկ. «Որ ողոր-  
մութեամբ»: Յմք. դձ. «Որք տըն-  
կակից» եւ «Յամբարձաւ Տերն մեր  
Յրիստոս»: ճշ. ընթ. (Ղկ 21.5-38:  
Գրծ 27.1-28.16: Յդ 1.16: Յհ 13.16-  
30: Մտ 23.1-39: Մր 13.1-37):

Ելաստեղ

- 7 Ծբ. ԱԶ. ԽԹ. օր Յինակ:** Լրումն է 10  
կարգի տևորինականացն Յարու-  
թեան եւ աւետարանացն: Յոց. դկ.  
զ. «Որ յահեղակերպ»: Ճշ. շրկ. դկ.  
«Իշխանութիւնք»: Յերեկոյի Մես.  
գալստեան: «Ս. Աստուած որ Եկիր  
եւ գալոցդ ես»: Յմբ. դձ. «Առաքելոյ  
աղանոյ» (յատեան): Սղ. ՃԽԲ.  
«Յոգի քո սուրբ», Աւետարան: Ջրզ.  
«Գոհաբանելով», «Կեցո», «Խա-  
ղաղութեամբ քով Յոգիդ սուրբ  
Աստուած»: Ճշ. ընթ. (Ղկ 22.1-30:  
Գրծ 28.17-32: Յդ 1.17-25: Յհ 13.31-  
14.13: Մտ 24.1-26.2: Մր 14.1-26):

ԽԱԼ. Տօն Ա.ՍԻՒԱ  
Գուրպան պայրամբ, 4 օր

- 8 ♫ Կիր. ԱԿ. Ը. Ծ. օր Յինակ:** 11  
ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՅՈԳԻՉՆ ՍԾՐ-  
ԲՈՅ: (ՊԵԼՏԵԿՈՍԵ՛ յիսերոդ օր  
'ի Զատիկեն): Ի գիշերին հսկումն

Ե եւ դիցեն զսրբութիւնն ի վերայ  
բազմոցին: Զկնի «Ճանապարհ  
մոլորելոց»ին երգ՝ «Գերագոյն  
շնորհաց բաշխող»: Յետ. շրկ. դձ.  
«Ճամբարձաւ Տերն մեր յերկինս»:  
Օրի. դձ. «Առաքելոյ աղաւնոյ»  
(յատեանն, սարօթն): Առաւոտու  
երգ՝ «Չգալուստ Յոգևոյն օրինես-  
ցուք»: Թրզ. «Ասացուք»: «Ս. Աստ-  
ուուած որ Եկիր եւ հանգեար յառաք-  
եալսն»: (Յայս շաբաթիս երգ,  
քարոզ եւ Ս. Աստուած սոքա Են):  
Ապա Ելցեն ի թափօր: Շրկ. դձ.  
«Առաքելոյ աղաւնոյ»: Գիրք, Ալէ.  
Սղ. ճևԲ. «Յոգի քո սուրբ Եւ  
բարի», Աւետարան, Անդաստան,  
«Պահպանիչ»: Շրկ. հնգ. ի ծայսէն:  
Սղ. ճիթ. «Եղիցին ականջք», Աւե-  
տարան, «Յոգւոց», «Քրիստոս Որ-  
դի»: Շրկ. թկ. «Երրորդութիւն ան-  
բաժանելի» (յատեանն): «Նորա-

ստեղծեալ», «Խնդրեսցուք», «Կեցո», «Քում ամենազօր եւ իրաշալի գալստեանդ Յոգիդ սուրբ Աստուած»: Ժմտ. «Աստուած զքեզ խոսոովանիմք»: Միք. «Յրեշտակային»:

Իսկ յորժամ պատարագիչն հասանիցի յայն տեղին, յորում ասէ «Առեք, կերե՛ք», երգեսցեն զշարականս եւ ընթերցցին գերիս աղօթս Սրբոյն Յովիաննու Ոսկեբերանին, գորս ասացեալ է ի դեմս Սրբոյ Երրորդութեան՝ «Ամենակալ անարատդ Աստուած» (Տե՛ս ի Տօնացուցի եւ ի Ճաշոցի):

Յերեկոյին՝ թափօր: Ասեն զշարականսն եւ ընթեռնուն գերիս Աւետարանսն: Ա. շրկ. դձ. «Առաքելոյ աղանոյ»: Բ. շրկ. դձ. «Կենդանար Աստուած»: Գ. շրկ. բձ. «Նոյն եւ նման»: Եւ ապա տեառնագրես-

ցԵն զանդաստան: Ապա «Խոնարհեցո» եւ «Ապրեցո»: Մես. «Աթռնքու Աստուած»: ՅՄբ. բկ. «Երրորդութիւն անբաժանելի» (յատեան): Արձակման Սղ. ՃԾ. «Օրինեցէք զԱստուած», Աւետարան: Ծրկ. գձ. «Որ համագոյն»: Ապա աղօթք Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն՝ «Ստիպիմ ի սիրոյ»: Ջրզ. «Գոհաբանելով», «Կեցո», «Խաղաղութեամբ քով Յոգիդ սուրբ»: Ճշ. ընթ. (Գրծ 2.1-21: Յհ 14.25-31):

**Բարեկենդան  
Եղիական Պահոց**

Լտ. Հոգեգալուսան

- 9 **Բ2. ԲԶ. Բ. օր Յոգեգալստեան:** 12  
**Պահը:** Օրի. բձ. «Նոյն եւ նման» (իւր սարօցն): Գիրք, Ալե. Սղ. Ի՛ւ. «Զայս Տեառն»: Աւետարան, «Արարչական»: «Խննդրեսցուք», «Զում

ամենազօր գալստեանդ Յոգիդ»:  
Ժմտ. «Այսօր ի հրեղէն»: ճշ. շրկ.  
բժ. «Նոյն եւ նման» (զերկոսին ի  
միասին ասա):


Յերեկոյին առաջին Սղ. ճԳ. «Առա-  
քես զՅոգի քո», Աւետարան: Մես.  
«Տեր թագաւորեաց»: Յմբ. բկ.  
«Այսօր երկնայինըն»: Արձակման  
Սղ. հԸ. «Զայն Տեառն»: Աւետա-  
րան, «Գոհաբանելով», «Կեցո»,  
«Խաղաղութեամբ քով»: ճշ. ընթ.  
(Յո 1.1-17; Մտ 7.28-8.4):

10 42. ԲԿ. Գ. օր Յոգեգալստեան: 13

**Պահը:** Օրի. բկ. «Այսօր երկնա-  
յինըն» (իւր սարօթ): Գիրք, ԱլԵ.  
Սղ. ճԽԵ. «Գովեա Երուսաղէմ»:  
Աւետարան, «Եական», «Կեցո»,  
«Չում ամենազօր»: Ժմտ. «Վասն  
որոյ եւ մեք»: ճշ. շրկ. բկ. «Այսօր  
երկնայինըն»: Յերեկոյին առաջին  
Սղ. ԼԲ. «Ողորմութեամբ»: Մես.

«Երգեցէք»: Յմբ. գձ. «Արեգակն արդարութեան»: Արձակման Սղ. ճխէ. «Գովեա Երուսաղեմ»: ճշ. ընթ. (Յո 1.18-25: Մտ 8.5-13):

- 11 **Դշ. ԳԶ. Դ. օր Յոգեգալստեան:** 14  
**Պահը:** Օրի. գձ. «Արեգակն արդարութեան» (իւր սարօթն): Գիրք, Ալե. Սղ. ԽԴ. «Կասն այսորիկ Էօծ», Աւետարան, «Խաւարն անգոյ», «Կեցո», «Թում ամենազօր»: Ժմտ. «Աստուած զքեզ»: ճշ. շրկ. գձ. «Արեգակն արդարութեան»: Յերեկոյին առաջին Սղ. ԽԴ. «Վասն այսորիկ Էօծ»: Մես. «Եկայք Եւ տեսէք»: Յմբ. գկ. «Չանչկզընաբար»: Արձակման Սղ. ՃՄԲ. «Որպէս իւղ»: ճշ. ընթ. (Յո 2.2-11: Մտ 8.18-27):



Յինչ երկինք, պարզ եւ հանելի օդ

**Եշ. ԳԿ. Ե. օր Յոգեզալստեան:** 15

**Պահը:** Օրի. գկ. «Զանսկզբնաբար» (իւր սարօթն): Գիրք, ԱլԵ. Սղ. ԽԵ. «Գնացք գետոց», Աւետարան, «Ճառագայթեալ», «Կեցո», «Զում ամենազօր»: Ժմտ. «Այսօր ի հրեղէն»: ճշ. շրկ. գկ. «Զանսկզբնաբար»: Յերեկոյին առաջին Սղ. ԺԸ. «Յանկալի է նա»: Մես. «Աստուած մեր»: Հմբ. դձ. «Անմահարար»: Արձակման Սղ. ԽԵ. «Գնացք գետոց»: ճշ. ըլք. (Յ 2.12-24: Ստ 8.28-34):

**Ուր. ԴԶ. Զ. օր Յոգեզալստեան:** 16

**Պահը:** Օրի. դձ. «Անմահարար» (իւր սարօթն): Գիրք, ԱլԵ. Սղ. ՃԽԲ. «Յոգի քո սուրբ», Աւետարան, «Չհանդուրժեալ», «Կեցո», «Զում ամենազօր»: Ժմտ. «Վասն որոյ»: ճշ. շրկ. դձ. «Անմահարար»: Յերեկոյին առաջին Սղ. Ծ. «Սիրտ

սուրբ»: Մես. «Եղիցի ձեռն»: Յմբ.  
դկ. «Ի հարաշարժ»: Արծակման  
Սղ. ճիւմ. «Հոգի քո»: ճշ. ընթ. (Յո  
2.25-3.9: Մտ 9.1-8):

- 14 **Ծբ. ԴԿ. Ե. օր Հոգեգալստեան:** 17  
**Պահը:** Օրի. դկ. «Ի հարաշարժ»  
 (իւր սարօն): Գիրք, Ալե. Սղ. ճիւմ.  
 «Հոգի քո սուրբ», Աւետարան,  
 «Տերն յետ ստեղծման», «Կեցո»,  
 «Քում ամենազօր»: ճշ. շրկ. դկ.  
 «Ի հարաշարժ»: Յերեկոյին առա-  
 ջին Սղ. իբ. «Տեր հովուեսցէ»:  
 «Լոյս զուարթ»: Մես. «Աստուած  
 աստուծոց»: «Ս. Աստուած որ եկիր  
 եւ հանգեար»: Յմբ. դձ. «Հոգին  
 սուրբ էր»: «Յայր գթած», արծակ-  
 ման Սղ. ՂԲ. «Տեր թագաւորեաց»:  
 «Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր  
 խաղաղութեան»: ճշ. ընթ. (Եր  
 1.1-10, 38.1-13: Բ.Պտ 2.9-22: Մտ  
 2.16-18):

- 15 **Ք Կիր. ԱԶ. Ը. օր Յոգեգալստեան:** 18  
**Սկիզբն յարութեան կիւրակե-**  
**ից: Յիշատակ Եղիայի մարգարե-**  
**ին): Յոց. յար. աձ. ա. «Որ Եկիր ի**  
**փրկութիւն»; Յմբ. յար. աձ. ա. «Ըսդ**  
**լուսանալ միաշաբաթիւն»; Յերե-**  
**կոյին նախատօնակ արա: Շրկ. դկ.**  
**«Անձինք նուիրեալը» (իւր սարօջն):**  
**Ճշ. ըսթ. (Գ.թզ. 18.29-46; Դ.թզ. 2.1-**  
**15: Յկ 5.16-20; Դկ 4.25-30):**

Լու. տօն

Ամենասուրբ Երրորդութեան

- 16 **ԲՀ. ԱԿ. Սրբոց կուսանացն Յոհի-** 19  
**սիմեանց:** Օրհ. դկ. «Անձինք նուկր-  
**եալը» (իւր սարօջն): Ժմտ. «Որք**  
**ծագեցան մեզ»: Ճշ. շրկ. դկ.**  
**«Զրիստոս Աստուած բացեր»: Յմբ.**  
**դկ. «Անսկիզբն Բանդ»:**  
**Յերեկոյին նախատօնակ արա:**

Ծրկ. դկ. «Անձինք նույիրեալք» (իւր սարօթն): ճշ. ընթ. (Առ 31.29-31: Ես 61.10-62.3: Յո 15.30-16.2: Մտ 10.26-33):

- |    |   |    |
|----|---|----|
| 17 | <b>Գշ. ԲԶ. Սրբոց կուսանացն Գայ-<br/>իանեաց:</b> Օրի. դկ. «Անձինք նույիր-<br>եալք» (իւր սարօթն): Ժմտ. «Չյաղ-<br>թական»: ճշ. շրկ. դկ. «Քրիստոս<br>Կստուած բացեր»: Յմբ. դկ. «Ա-<br>նըսկիզբն Բանդ»: ճշ. ընթ. (Առ<br>1.20-23: Բրը 4.36-5.4: Բ.Կր 6.16-<br>7.1: Յհ 16.1-5): | 20 |
| 18 | <b>Գշ. ԲԿ. Պահը:</b> Յրց. ապշ. աճ. ա.<br>«Որ հայիս քաղցրութեամբ»: Մնկ.<br>Եւ Յմբ. ապշ.՝ ի ծայսեն:<br>Յերեկոյին նախատօնակ արա:<br>Ծրկ. գճ. «Չմարգարէ բարձրելոյն»<br>(իւր սարօթն): ճշ. ընթ. (Յո 3.19-31:<br>Մտ 9.9-15):   | 21 |

 Վերջին բառորդ լուսնի  
Պարզ, խոնաւ եւ տօք

- 19 **Եշ. ԳԶ. Սրբոցն՝ Յովիաննու Կա-** 22  
**րապետին եւ Աթանագինեայ Ե-**  
**պիսկոպոսին:** Օրի. գձ. «Չմար-  
**գարէ բարձրելոյն» (իւր սարօծն):  
**Մսկ. եւ Հմբ. դկ. «Մարգարեից**  
**գերագոյն»: Ժմտ. «Չյառաջնթա-**  
**ցութիւն»: Ճշ. շոկ. դկ. «Այսօր**  
**ցնծայ»: Ճշ. ընթ. (Ար 15.21-26: Ես  
22.20-25: Ա.Պտ 5.1-7: Մտ 11.2-14):****

Լ.Ա. Տօն Ա. Հաղորդութեան  
(Corpus Christi)

- 20 **Ուր. ԳԿ. Պահը:** Յոց. ինգ. ակ. 23  
«Գոհաբանեմք զքեզ»: Մսկ. Խաչի  
գկ. գ. «Ով պահապան»: Հմբ. ապշ.  
՚ի ծայսէն:  
Յերեկոյին նախատօնակ արա:  
Շրկ. թձ. «Ով երջանիկ» (իւր սա-

O. 132

ՅՈՒՆԻՍ

L.

ոօքն): ճշ. ընթ. (Յո 4.1-12: Մտ  
9.27-34):


Հայկական տոմարաւ՝  
Մարգար, 30 օր

- 21 ✽ Ճ. ԴԶ. ՏՕՆ Է ՄՐԲՈՅՆ ԳՐԻ- 24  
ԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ ԵԼԱ-  
ՆԵԼՈՅՆ ՚Ի ՎԻՐԱՊԵՆ: Օրի. բձ.  
«Ով երջանիկ» (յատեան, իւր  
սարօքն): Թագ. յաւ. «Վյոր դասք»:  
Մնկ. դձ. «Յրաշափառ» եւ «Որ  
կոչեցար»: Զկի «Տերն յետ ստեղծ-  
ման»ին երգ՝ «Յաւատարիմ եւ  
իմաստուն»: Ժմտ. «Յնծայ այսօր»:  
Յերեկոյին Մես. Կիրակամտի: «Ո.  
Աստուած որ խաչեցար»: Հմբ. գձ.  
«Ուրախ լեր» (յատեան): «Խընդ-  
րեցուք», «Կեցո», «Թագաւոր  
խաղաղութեան»: ճշ. ընթ. (Իմստ  
5.1-8: Ես 60.20-61.7: Եբդ 13.17-21:  
Մտ 19.27-29):

- 22 ✽ Կիր. ԴԿ. Բ. զկսի Հոգեգալըստ- 25  
եան: ՏՕՆ Է ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԿԵ-  
ՂԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԵԶՍԻԱԾՆԻ:  
Չկնի «Աստուած անեղ»ին երգ՝  
«Ծինող Եհցու»: Օրի. գձ. «Ուրախ  
լեր» (յատեան, սարօթն: ՏԵ՛Ս  
Խաչվերացի Դշ. աւուրն): Ալելուք  
Եկեղեցոյ: Մեծ. գձ. «Անսկզբնա-  
կան Բանին»: Ջրզ. «Ասացուք»:  
«Ս. Աստուած որ Խաչեցար»: Թա-  
փոր: Շրկ. դկ. «ԵջՄիածին ի Յօ-  
րէ»: Գիրզ. Սղ. ԶԳ. «Որպէս սիրե-  
լիք Են», Աւետարան, Անդաստան:  
Շրկ. հնգ. դկ. «Թագաւոր Փա-  
ռաց», «Աստուածածին Սուրբ  
Կոյս», «Որ յանսկիզբն ԵԵն»: Սղ.  
Ճիթ. «Ի խորոց կարդացի», Աւե-  
տարան, «Հոգւոց»: Ապա «Նորա-  
ստեղծեալ», «Խնդրեսցուք», «Քում  
ամենազօր»: Ժմտ. «Տեր մեր Եւ  
Փրկիչ»: Ճշ. շոկ. գձ. «Այսօր ուրա-

խացեալ» (Տե՛ս նոյն աւուր Մանկունքն): Սրբ. «Յրեշտակային»:

Յերեկոյին թափօր: Շրկ. դկ. «Եջ Սիածինն»: Գիրք, Սղ. Դ. «Նշանեցաւ», Աւետարան, Անդաստան: Ապա «Խոնարհեցո» եւ «Ապրեցո»: Մես. «Աստ օրհնեցեք»: Թրզ. «Ասացուր»: Հմբ. գձ. «Վյոր ուրախացեալ»: «Ս. Եկեղեցեաւ», «Կեցո», «Ի մեջ տաճարիս»: ճշ. ընթ. (Առ 9.1-6: Զք 3.7-4.9: Եբր 9.1-10: Յհ 10.22-30):



Առաջին ամիս ամառնային  
Ամառնամուտ եւ արեւադարձ Խեցգետնի  
Ցերեկն սկսանի կարթանալ  
եւ գիշերն երկարիլ

23 Բ2. ԱԶ. Սրբոցն՝ Մանկանցն Բեթ- 26  
դեհեմի, եւ Ակակիոսի վկային, եւ  
Մովկիմայ քահանային, եւ Կոդ-

**բատիոսի գիևալրին:** Օրի. մրտ.  
 'ի ծայնեն: Յոց. դժ. «Այսօր ան-  
 մեղ»: Մնկ. եւ Յմբ. դկ. ստեղի՝  
 «Երանելի սուրբ մանկունքն»:  
 Ժմտ. «Ի տաճարի»: Ծշ. շրկ. մրտ.  
 ի ծայնեն: Ծշ. ընթ. (Առ 29.2-7: Ես  
 18.7: Եբր 2.14-18: Մտ 2.16-18):

24 **Գշ. ԱԿ. Սրբոց կուսանացն Նունեայ** 27

**Եւ Սանեայ:** Օրի. դկ. «Անձինք  
 նուիրեալք» (իւր սարօթն): Ժմտ.  
 «Ճարսնացեալք»: Ծշ. շրկ. դկ.  
 «Ջրիստոս կստուած բացեր»: Յմբ.  
 դկ. «Անսկիզբն Բանդ»: Ծշ. ընթ.  
 (Եղա 8.14-24: Ես 27.11-13: Ա.Պտ  
 5.8-11: Յհ 12.24-26):

25 **Ղշ. ԲԶ. Պահը:** Յոց. ապշ. աձ. բ. 28

«Որ համագոյից ես հաստիչ»: Մնկ.  
 Եւ Յմբ. ապշ. 'ի ծայնեն: Ծշ. ընթ.  
 (Յո 4.13-22: Մտ 10.34-42):

ՅՈՒՆԻՍ ՊՐԵՍԵՎՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տօբագին եղանակ

- 26 **Եշ. ԲԿ. Սրբոց իշխանացն՝ Սահակայ եւ Յովսիփայ եւ Վկայիցն՝ Սարգսի եւ Բագոսի:** Օրի. մրտ. 'ի ծայնեն: Յրց. մրտ. աձ. ա. «Զքեզ արդար»: Մնկ. եւ Յմբ. մրտ. 'ի ծայնեն: Ժմտ. «Ի տաճարի»: Ծշ. ընթ. (Ար 6.1-5: Ես 33.5-8: Յո 8.18-27: Ղկ 21.12-19):
- 27 **Ուր. ԳԶ. Պահը:** Յրց. հնգ. բձ. «Որ թագաւորդ ես»: Մնկ. Խաչի գձ. ա. «Փայտ կենաց որ փոխանակ»: Յմբ. ապշ. 'ի ծայնեն: Ծշ. ընթ. (Յօ 5.12-21: Մտ 11.25-30):
- Խղամական տոմարաւ,  
Մուհարբամ, 30 օր եւ  
տարեմուտ 1447 թուին Հինքրաբի
- 28 **Ծբ. ԳԿ. Սրբոցն՝ Ներսիսի մեծին հայրապետին մերոյ եւ Խաղայ Եպիսկոպոսին:** Օրի. բկ. «Որ զլոյս անձառ» (իւր սարօցն): Մեծ. դձ.

«Թագաւոր փառաց»: Ժմտ. «Զհայրապետական»: ՅՄբ. աձ. «Սուրբ Ես Տէր» եւ «Երկնաքաղաքացին»:  
ճշ. ընթ. (Խմստ 2.23-3.8: Ես 57.15-  
16: Եբր 13.7-9: Մտ 10.16-22):

- 29 ✕ Կիր. ԴԶ. Գ. զկսի Յոգեգալսըտ- 3  
եան: Յոց. յար. աձ. թ. «Պայծառացիր Եկեղեցի»: ՅՄբ. յար. դձ. ա.  
«Փառաբանակից»: Յրզ. «Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան»: ճշ. ընթ. (Ես 1.2-15: Յո  
6.12-23: Մտ 12.1-8):

Բարեկենդան  
Ս. Լուսաւորչի Պահոց

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԵԴԱՐՁ  
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՍԱՆ  
(Յունիս 28-1 Յուլիս)  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐՎԱՆԻՑ ԱՌԱՋՆՈՅ  
ՄՐԱՎԱՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՄԵԾԻ ՏԱՍՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Յընթացս Պատարագի կատարի  
Մաղթանք Յայրապետական յա-  
մենայն Եկեղեցին Յայաստանեայց,  
որը ընդ հովանեաւ Ա. Աթոռոյս  
Կաթողիկոսութեան Կիլիկիոյ:

- 30 **Բ2. ԴԿ. Պահը:** Սրբոցն՝ Եպիփա-  
նու Կիայրացոյն, Բարելայ հայրա-  
պետին, եւ Երից աշակերտաց նո-  
րին: Օրի. Մրտ. ’ի ձայնեն: Յրց. դձ.  
«Սրանչելագործ»: Մնկ. եւ Յմբ. գձ.  
«Նմանեալ»: Ժմտ. «Զհայրապե-  
տականն»: Ծշ. շրկ. դձ. «Այսօր  
Երկսայնցն»: Ծշ. ընթ. (Իմստ 8.7-  
10: Նհ 1.7-9: Ա.Կր 12.4-11: Մր  
6.45-52):



## ՅՈՒԼԻՍ

31

- 1 Գշ. ԱԶ. Պահը: Արքոցն՝ Կոստան-  
դիանոսի թագաւորին եւ մօրն  
Նորա Հեղինեայ: Օրի. ակ. «Որ  
զերկսաւոր» (իլր սարօթ): Սևկ. եւ  
Յմբ. թկ. «Ով երանելին»: Ժմտ.  
«Որպէս յետ աստուածասէր» (ա.):  
Ճշ. շոկ. բժ. (Ողորմեա) «Աստուած  
Փրկիչ մեր»: Ճշ. ընթ. (Առ 16.9-17:  
Բրց 3.31-4.4: Ա.Տմ 2.1-7: Դկ 7.1-  
10):
- 5

- 2 Դշ. ԱԿ. Պահը:** Յոց. ապշ. աճ. գ. 6  
 «Որ յամենային ես կարող»: Մսկ.  
 եւ Յմբ. ապշ. 'ի ձայնեն: Ճշ. ընթ.  
 (Յո 7.1-11: Մտ 12.9-15):

 Առաջին ժառորդ լուսնի  
 Երեւումն տապոյ

- 3 Եշ. ԲԶ. Պահը:** Սլրոցն՝ Թէորի-  
 տոսի Գաղատացւոյն, եւ Թալիլեայ  
 բժկին, եւ Եօթն կուսանացն որք  
 յԱնկիւրիա կատարեցան: Օրի.  
 մրտ. 'ի ձայնեն: Յոց. մրտ. ակ. ա.  
 «Սուլը Աստուած արարիչ»: Մսկ.  
 եւ Յմբ. մրտ. ի ձայնեն: Ժմտ. «Ի  
 տաճարի»: Ճշ. շրկ. մրտ. 'ի ձայ-  
 նեն: Ճշ. ընթ. (Խմստ 6.11-21: Բ.Կր  
 6.1-10: Յի 16.1-5):

- 4 Ուր. ԲԿ. Պահը:** Յոց. ինգ. բկ. «Ա-  
 րարիչ եւ մարդասեր»: Մսկ. Խաչի  
 բկ. բ. «Խաչն կենարար»: Յմբ.  
 ապշ. 'ի ձայնեն:

Յերեկոյին նախատօնակ արա:  
Ծրկ. գկ. «Լերինք ամենայն» (իւր  
սարօթն): Ճշ. ընթ. (Յո 7.12-25: Մտ  
12.15-21):

- 5 **❖ Ծբ. ԳՁ. ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ ՄԸՐ- 9**  
**ԲՈՅՆ ՅՈՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ**  
**ԼՈՒՍԻՈՐՉԻՆ:** Օրի. գկ. «Լերինք  
ամենայն» (իւր սարօթն): Թագ.  
յաւ. «Այսօր դասք»: Զկնի «Տերն  
յետ ստեղծման»ին երգ՝ «Յաւա-  
տարիմ եւ իմաստուն»: Ժմտ.  
«Ցնծա այսօր»: Յմբ. աձ. «Սուրբ  
եւ Տեր» եւ «Երկնաքաղաքացին»:  
Ճշ. ընթ. (Իմստ 4.7-15: Մը 7.7-10:  
Գրծ 20.22-32: Յհ 10.11-16):
- 6 **❖ Կիր. ԳՎ. Դ. զկնի Յոգեգալըստ- 10**  
**ԵԱՆ:** Յրց. յար. ակ. ա. «Որ եկիր ՚ի  
փրկութիւն»: Յմբ. յար. գկ. ա.  
«Յարեաւ Տերն»: Ճշ. ընթ. (Ես 1.  
21-31: Յո 7.25-8.11: Մտ 12.38-45):

Խալ. Աշուրա

- 7 **ԲՀ. ԴԶ. Սրբոց վկայիցն՝ Անտոնի-** 11  
**նոսի, Թեռփիլոսի, Անիքտոսի եւ**  
**Փոտիլոսի:** Օրհ. մրտ. 'ի ծայնեն:  
 Յրց. մրտ. բձ. ա. «Անոխակալ»:  
 Մնկ. եւ Յմբ. մրտ. 'ի ծայնեն:  
 Ժմտ. «Ի տաճարի»: Ծշ. ընթ.  
 (Իմստ 3.1-8: Ես 48.16-17: Բ.ՏՄ  
 3.10-15: Ցհ 15.11-16):
- 8 **ԳՀ. ԴԿ. Սրբոցն՝ Դանիէլի մարգա-** 12  
**րէին եւ երից մանկանցն՝ Սեղրա-**  
**քայ, Միսաքայ եւ Աբեղնագովի:**  
 Օրհ. ակ. «Որ զաստուածային»:  
 Յրց. մրտ. ակ. բ. «Որ բարձրեալդ  
 Ես»: Ողր. (Մարգարէից) աձ. «Որ  
 զծածկեալ խորհուրդ»: (Եւ այլ  
 ամենայն ըստ կարգի): Ժմտ. «Որ  
 ի Վերայ քերովբեիցն»: Ծշ. ընթ. (Դն  
 2.1-49: Եբբ 11.32-40: Մտ 24.9-15):
- 9 **ԴՀ. ԱԶ. Պահը:** Յրց. ապշ. աձ. դ. 13  
 աղց. «Երգէին մանկունք»: Մնկ. եւ  
 Յմբ. ապշ. 'ի ծայնեն:

Յերեկոյին նախատօնակ արա:  
Ծրկ. ակ. «Որք զարդարեցին» (իւր  
սարօթն): Ճշ. ընթ. (Հռ 9.1-16:  
Մտ13.1-8):

- 10 **❖ Եշ. ԱԿ. ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ** 14  
**ՎԱՐԴԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՅ՝ ՍԱՅԱ-**  
**ԿԱՅ ԵՒ ՄԵՄՐՈՊԱՅ:** Օրհ. ակ.  
 «Որք զարդարեցին» (իւր սարօթն):  
 Ժմտ. «Զհայրապետական»: Ճշ.  
 շրկ. դձ. «Որ զշնորհս»: Հմբ. գձ.  
 «Նմանեալ Մովսեսի»: Ճշ. ընթ.  
 (հմտ 8.7-10: Ես 61.6-9: Ա.Կր  
 12.4-11: Ղկ 12.32-40):

Տօն ազգային

 Լրումն լուսնի  
Սաստիկ տօք եւ խոնաւ

- 11 **ՈՒՐ. ԲՁ. Պահը:** Յոց. հնգ. գձ. «Օրհ- 15  
 ՆԵՄՔ զքեզ Յայր»: Մսկ. Խաչի բձ. գ.

«Ապահնեցաք ի խաչ քո»: Յմբ.  
ապշ.՝ի ձայնեն: ճշ. ընթ. (Բռ 9.17-  
27: Մտ 13.16-23):

- 12 **Ծր. ԲԿ. Սրբոցն՝ Տրդատայ թագա-  
տրին մերոյ եւ Աշխինի տիկնոջն եւ  
Խոսրովիդիստոյն:** Օրի. ակ. «Որ  
զերկնաւոր» (իւր սարօքն): Մսկ.  
դժ. «Որ զերագոյն»: Ժմտ. «Որպէս  
յետ աստուածասէր» (ք.): ճշ. շրկ.  
բժ. «Աստուած Փրկիչ մեր»: Յմբ.  
աձ. «Սուլրը ես Տէր» եւ «Երկնաքա-  
ղաքացին»:  
Յերեկոյին նախատօնակ արա:  
Շրկ. ակ. «Որ նախիմաց» (իւր սա-  
րօքն): «Ա. զԱստուածածինն»,  
«Կեցո», «Ընկալ Տէր»: ճշ. ընթ.  
(Իմստ 6.2-10: Ես 45.1-3: Ա.Տմ 2.1-  
7: Ղկ 11.14-23):
- 13 **Ք Կիր. ԳԶ. Ե. զկնի Յոգեգալըստ-  
եան: Տօն սուլր Աստուածածնի  
Տփոյ գտմանն: Զկնի «Ուահ գործ-** 17

եալ»ին երգ՝ «Զայսիւ առ քեզ»:  
Օրի. գկ. «Երգեցէք որդիք» (իւր  
սարօթն): Ալե. ծննդեան: Առաւօտու  
երգ՝ «Հշցէ որպէս զանձրեւ»: Թրզ.  
«Մայր սուրբ»: «Ս. Աստուած որ  
յարեար»: Սղ. ճթ. «Ի Վայելչու-  
թիւն», Աւետարան: «Նորաստեղծ-  
եալ», «Կեցո», «Զում ամենազօր»:  
(ճաշու ամենայն ինչ յարովթեան է):  
Յերեկոյին՝ Մես. ծննդեան: Թրզ.  
«Մայր սուրբ»: Յմբ. դժ. «Նոր  
Սիոն»: «Ս. զԱստուածածիւն»,  
«Կեցո», «Ընկալ Տէր»: ճշ. ընթ.  
(Ես 2.5-11: Յո 9.30-10.4: Մտ 13.24-  
30):

- 14 **Բ2. ԳԿ. Սրբոցն՝ Կալիստրատոսի,** 18  
**եւ քառասուն եւ ինն վկայիցն, եւ**  
**Ղուկասկիանոսի քահանային:** Օրի.  
մրտ. 'ի ծայնեն: Յրց. բծ. բ. «Ըսդ  
սուրբս քո»: Մնկ. եւ Յմբ. մրտ. 'ի  
ծայնեն: Ժմտ. «Ի տաճարի»: ճշ.

ընթ. (Առ 1.1-9; Ես 41.1-3; Եբր 12.1-7; Մը 13.9-13):

- |    |  |    |
|----|--|----|
| 15 | <b>Գ2. Դ2. Սրբոյն Զաքարիայ մարդարէիս:</b> Օրի. ակ. «Որ զաստուածային»: Յրց. աձ. «Որ յերկնային» (իւր սարօթ): Ժմտ. «Տէր որ հիմնեցուցեր»: Յմբ. դձ. «Որ զյառաշագոյն»: Ճշ. ընթ. (Չք 3.7-4.9: Ա.Կը 12.28-13.3: Մտ 23.34-39):                      | 19 |
| 16 | <b>Դ2. Դ4. Պահը:</b> Յրց. ապշ. աձ. ե. «Բարեբանեալ Ես թագաւոր»: Մսկ. Եւ Յմբ. ապշ. 'ի ձայսէն: Ճշ. ընթ. (Քթ 10.5-17: Մտ 13.31-42):  | 20 |
| 17 | <b>Ե2. Ա2. Սրբոյն Եղիսէի մարգարէիս:</b> Օրի. ակ. «Որ զաստուածային» (սարօթ): Մեծ. դձ. «Որ իբարձրութիւնս»: Ժմտ. «Տէր որ հիմնեցուցեր»: Ճշ. շրկ. աձ. «Ճառագայթ»: Յմբ. դձ. «Որ զյառաշագոյն»: Ճշ. ընթ. (Դ.Թզ 13.14-21: Ա.Կը 2.6-10: Ղկ 4.25-30): | 21 |

- 18 Ուր. ԱԿ. Պահը:** Յոց. հնգ. գկ. 22  
 «Բանդ Աստուած»: Սսկ. Խաչի ակ.  
 ա. «Մեղան քո Տեր զօրութեան»:  
 Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնեն: ճշ. ընթ. (Յո  
 11.1-12: Մտ 13.43-52):

 Վերջին ժառորդ լուսնի  
 Տապագին աւուրի եւ խոնաւ

- 19 Ծբ. ԲԶ. Սրբոց Երկուտասան առա- 23  
 քելոցն Քրիստոսի. Եւ սրբոյն Պօ-  
 լոսի Երեքտասաներորդ առաքե-  
 լոյն: Օրի. գձ. «Երանելի սուրբ  
 առաքեալք» (իւր սարօթն): Չկսի  
 «Տերն յետ ստեղծման»ին Երգ՝  
 «Սաքրապէս օրինակի»: Ժմտ.  
 «Առաքեալք»: ճշ. շոկ. ակ. «Ի յան-  
 սահման»: Յմբ. աձ. «Սուրբ Ես  
 Տեր» եւ «Ի թէն հայցեմք»: ճշ. ընթ.  
 (Իմստ 9.9-10.2: Ելք 15.23-27: Ա.Թս  
 2.9-16: Մտ 9.36-10.7):**

- 20 **Ք Կիր. ԲԿ. Զ. զկսի Յոգեգալըստ-** 24  
**Եան:** Յրց. յար. թձ. ա. «Որ ի յերկ-  
 նից իշեր»: Յմբ. յար. թկ. ա. «Թո-  
 յարութեանդ»: Ծշ. ընթ. (Ես 3.1-11:  
 Յո 11.13-24: Մտ 14.13-21):

**Բարեկենդան**  
**Պայծառակերպութեան Պահոց**

Հայկական տոմարաւ՝  
 Հրոտից, 30 օր

- 21 **ԲՀ. ԳՀ. Ա. օր Պայծառակերպու-** 25  
**թեան Պահոց:** Յրց. ապշ. աձ. զ.  
 «Բարեքանեալ ես ի յաւիտեան»:  
 Մնկ. եւ Յմբ. ապշ. 'ի ծայնեն: Ծշ.  
 ընթ. (Յո 11.25-36: Մտ 14.22-36):
- 22 **ԳՀ. ԳԿ. Բ. օր Պայծառակերպու-** 26  
**թեան Պահոց:** Յրց. ապշ. ակ. ա.  
 «Չանուն քո Թրիստոս օրինեմք»:  
 Մնկ. եւ Յմբ. ապշ. 'ի ծայնեն: Ծշ.  
 ընթ. (Յո 15.1-13: Մտ 15.1-20):

- 23. ԴՀ. ԴԶ. Գ. օր Պայծառակերպու-** 27  
**թեան Պահոց:** Յրց. ապշ. ակ. բ.  
 «Որ խոսարհեցար»: Մսկ. Եւ Յմբ.  
 ապշ.՝ի ձայնեն: Ճշ. ընթ. (Յո 15.  
 14-29: Մտ 15.21-28):
- 24. ԵՀ. ԴԿ. Դ. օր Պայծառակերպու-** 28  
**թեան Պահոց:** Յրց. ապշ. ակ. գ.  
 «Աստուած հարցն մերոց»: Մսկ. Եւ  
 Յմբ. ապշ.՝ի ձայնեն: Ճշ. ընթ. (Յո  
 15.30-16.16: Մտ 15.29-38):

⊗ ՅԱՌԻԾԱՆ  
 Միջին ամիս ամառնային

- (❖) Ծնունդ լուսնի  
 Մերք չերմ, մերք տօք եւ խոնաւ
- 25. ՈՒՐ. ԱԶ. Ե. օր Պայծառակերպու-** 29  
**թեան Պահոց:** Յրց. ինգ. դճ. «Որ  
 փառօք Յօր»: Մսկ. Խաչի աճ. գ.  
 «Յրաշակերտ եւ զօրեղ»: Յմբ.

ապ2.՝ի ծայնեն: ճշ2. ընթ. (Յո 16.  
17-27: Մտ 15.39-16.12):

- 26 Ծր. ԱԿ. Յիշատակ Տապանակին 30  
հնոյ եւ տօն նորոյս սրբոյ Եկեղեց-  
ւոյ: Զկնի «Ճանապարհ մոլորելո-  
ց»ին երգ՝ «Ճինող էիցս»: Օրի. ակ.  
«Չքեզ քաղաք Աստուծոյ» (իւր  
սարօթ): Ալե. Եկեղեցւոյ: Թրգ.  
«Ասացուք»: «Ս. Աստուած որ  
խաչեցար»: Զկնի Մանկունքին  
Թրգ. «Ս. Եկեղեցեաւս», «Կեցո»,  
«Առ դրան»: Ժմտ. «Չխաղաղու-  
թին»: ճշ2. շրկ. ակ. «Որ ի սկզբ-  
բանե»: Յերեկոյին Մես. Եկեղեցւոյ:  
«Ս. Աստուած որ խաչեցար»: Յմբ.  
աձ. «Որ ի լերին» (յատեան):  
«Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր  
խաղաղութեան»: Նաւակատիք:  
ճշ2. ընթ. (Ելք 25.10-14: Յես 3.14-  
4.18: Ա.Թրգ 6.18-7.2: Բ.Թրգ 6.12-19:  
Եբր 9.1-10: Մտ 5.17-20):

- 27 ✕ Կիր. ԲԶ. ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐ-  
ՊՈՒԹԵՎԱՆ ՏԵԱՌՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒ-  
ՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ: (Նաեւ կոչի՝ ԱՅ-  
ԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ կամ ՎԱՐԴԱ-  
ՎԱՌ): Չկնի «Ժողովեալքս»ին երգ՝  
«Ի վերին Երուսաղէմ»: Յետ. շրկ.  
դժ. «Ցնծայ այսօր»: Օրի. աճ. «Որ  
ի լերինն» (յատեան, սարօթ):  
Ակելուք Վարդավառի: Ջրզ. «Ասա-  
ցուք»: «Ս. Աստուած որ յայտնե-  
ցար ի Թաթոր լերինն»: Շրկ. աճ.  
«Որ ի լերինն»: Գիրք, Սղ. ՂՂ.  
«Բարձրութիւնք լերանց», Աւետա-  
րան, Ասդաստան, «Ս. Խաչիս»,  
«Պահպանեա»: Շրկ. ստեղի դկ.  
«Լերինք ցնացեն»: Ապա «Նորա-  
ստեղծեալ», «Խնդրեսցուք», «Կե-  
ցո», «Թում ամենազօր եւ հրաշալի  
պայծառակերպութեանդ»: Ժմտ.  
«Երեւի Տերդ այսօր»: Արք. «Բազ-  
մութիւնք»:

Յերեկոյին՝ զառաւօտու Գիրքն եւ  
Սաղմոսն ասա: Զկսի Աւետարա-  
նիս շրկ. դձ. «Ի Թաբոր ի լերինն»:  
Օրթի, Աւետարան, Անդաստան:  
Ղպա «Խոնարհեցո» եւ «Վարեցո»:  
Մես. յարութեան: Թրզ. «Ասաս-  
ցուք»: «Ս. Աստուած՝ որ յայտնե-  
ցար ի Թաբոր լերինն» (յատեան):  
Յմբ. դկ. ստդ. «Այսօր ի լերինն»:  
Զկսի «Ճայր գթած»ին՝ Գիրք. Սոլ.  
ԶԸ. «Ձո Են Երկինք», Աւետարան:  
Ղպա աղօթք սրբոյն Եղիշէի վար-  
դապետին՝ «Օրինեալ Ես Տեր»: Եւ  
յաւարտիլն՝ «Խոնդրեցուք», «Կե-  
ցո», «Թագաւոր խաղաղութեան»:  
Ճ2. ընթ. (Իմստ 7.25-8.4: Չք 14.16-  
21: Ա.Յհ 1.1-7: Մտ 16.13-17.13):

Միջոց ուտիին երկու շաբաթ է  
Խոլամական տոմարաւ՝  
Սաֆար, 29 օր

- 28 **Ք ԲՀ. ԲԿ. Բ. օր Պայծառակերպութեան: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:** Օրի. բկ. «Ճառագայթ փառաց» (իւր սարօթը): ՄԱԿ. Եւ ՅՄԲ. բկ. ստեղի՝ «Օրինեցէք մանկունք»: ԶԿՆԻ «Սուրբ Ես Տեր» աղօթիցն՝ Գիրք, Սղ. ՂԴ. «Բարձրութիւնք», Աւտարան: «Արարչական», «Կեցո», «Թում ամենազօր»: ԺՄՄ. «Երեւի Տերդ»: ՃՀ. շրկ. բկ. «Ճառագայթ»: Սրբ. «Յրեշտակային»: ՃՀ. ընթ. (Ելք 19.9-13: Ղ. Թգ. 2.9-12: Ա. Ցհ 5.9-12: Ցհ 1.1-17):
- 29 **ԳՀ. ԳԶ. Գ. օր Պայծառակերպութեան:** Օրի. գձ. «Այսօր որ Էն» (իւր սարօթը): ՄԱԿ. Եւ ՅՄԲ. դկ. ստեղի՝ «Լերինք ամենայն»: ԶԿՆԻ «Սուրբ Ես Տեր» աղօթիցն՝ Գիրք, ԱլԵ. «Ամպ լուսաւոր», Աւտարան: «Էական», «Կեցո»: ԺՄՄ. «Երեւի Տերդ»: ՃՀ. շրկ. գձ. «Այսօր որ Էն»:

Ճշ. ընթ. (Ելք 19.16-20: Գ.Թգ. 19.11-16: Եբր 12.18-27: Ղկ 9.27-36):

- 30 **Դշ. ԳԿ. Պահը:** Յրց. ապշ. ակ. դ. «Օրինեալ եւ փառաւորեալ»: Մսկ. եւ Հմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ. (Ա.Կր 1.1-8: Մտ 17.21-18.4):

Սկիզբ աւուրց Շնիկ  
աստեղ (Սամելի)

- 31 **Եշ. Դշ. Սրբոյն Եսայեայ մարգարեին:** Օրի. ակ. «Որ զաստուածային»: Յրց. աձ. «Որ յերկնային» (իւր սարօթն): Ժմտ. «Տեր որ հիմնեցուցեր»: Ճշ. շրկ. աձ. «Ճառագայթ»: Հմբ. դձ. «Որ յառաջագոյն»: Ճշ. ընթ. (Ես 6.1-10: Եբր 11.32-40: Ղկ 4.14-22):



## ՕԳՈՍՏՈՒ

31

- 1 Ուր. ԴԿ. Պահը: Յրց. ինգ. դկ. «Յաւալիսենից Աստուած»: Մնկ. Խաչի դկ. թ. «Խաչի քո Զրիստոս Երկըրպագեն»: Հմբ. ապշ.՝ ի ձայնեն: Յերեկոյին Նախատօնակ արա: Ծրկ. գձ. «Երանելի սուրբ առաքեալք» (իւր սարօթն): ճշ. ընթ. (Ա.Կր 1.10-18: Մտ 18.2-9): 6

Առաջին ժառորդ լուսնի  
Պարզ եւ տօք

- 2 **Ծբ. ԱԶ. Սրբոցն՝ Թաղեռսի առա-  
քելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին:**  
Օրի. գձ. «Երանելի սուրբ առաք-  
եալք» (իւր սարօթն): Ժագ. յաւ.  
«Վյսօր դասք»: Մեծ. աձ. «Որ  
զԲանն Աստուած»: Սևկ. դկ. «Թեւ  
պարծի այսօր»: Ժմտ. «Առաք-  
եալք»: Ճշկ. ակ. «Որ սիրողդ  
եք»: Հմբ. աձ. «Սուրբ ես Տէր» եւ  
«Ի քէն հայցեմք»: Ճշ. ընթ. (Իմստ  
1.1-7: Եր 16.16-21: Ա.Կր 12.28-  
13.10: Դկ 9.1-6):
- 3 **Ք Կիր. ԱԿ. Բ. զկնի Պայծառա-  
կերպութեան:** Յոց. յար. բկ. ա. «Որ  
յերկնային»: Հմբ. յար. ակ. ա. «Ա-  
ռաքեցար ի Յորէ»: Ճշ. ընթ. (Ես 3.  
16-4.1: Ա.Կր 1.25-30: Մտ 18.10-14):
- 4 **ԲՀ. ԲԶ. Սրբոցն՝ Կիպրիանոսի ե-  
պիսկոպոսին, եւ քառասուն եւ հինգ  
հայ վկայիցն որք նահատակեցան  
՚ի Նիկոպոլիս քաղաք Փոքուն Յա-**

**յոց եւ կուսանացն՝ Յուստիանեայ,  
Եւփիմեայ, եւ Քրիստինեայ:** Օրի.  
Մրտ. ’ի ծայնեն: Յոց. Մրտ. թկ. ա.  
«Օրինեմք զքեզ»: Մսկ. եւ Յմբ. դկ.  
«Յիշատակ Քրիստոսի»: Ժմտ.  
«Յարսնացեալք»: ճշ. ընթ. (Ես  
46.12-13: Գդ 3.13-22: Ղկ 15.1-10):

- 5 **Գ2. ԲԿ. Արբոցն՝ Աթանագինեայ  
Եպիսկոպոսին, եւ տասն աշակեր-  
տացն, եւ հինգ Վկայիցն:** Օրի.  
Մրտ. ’ի ծայնեն: Յոց. Մրտ. թկ. թ.  
«Որք ’ի մարտի»: Մսկ. եւ Յմբ.  
Մրտ. ’ի ծայնեն: Ժմտ. «Չհայրա-  
պետական»: ճշ. շրկ. գձ. «Չա-  
ռաջնորդս»: ճշ. ընթ. (Առ 8.1-4: Մդ  
2.5-7: Ա.Պտ 5.1-7: Յհ 16.33-17.8):
- 6 **Դ2. ԳԶ. Պահը:** Յոց. ապշ. ակ. ե. 11  
աղց. «Փառաւորեալ յաւիտեան»:  
Մսկ. եւ Յմբ. ապշ. ’ի ծայնեն: ճշ.  
ընթ. (Ա.Կր 2.12-3.10: Մտ 18.15-22):

ՅԱ. ԵԼ. Լ.Ա. Այլակերպութիւն Տեառն  
Վերջ աւուրց Շնիկ  
աստեղ (Սամելի)

- 7 Եշ. ԳԿ. Սրբոց Նախահարցն՝ Աղա-  
մայ, Յաբիլի, Սեթայ, Ենովսայ,  
Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբ-  
րահամու, Իսահակայ, Յակոբայ,  
Յովսեփայ, Սովսիսի, Ահարոնի,  
Եղիազարու, Յեսուայ, Սամուելի,  
Սամփոնի, Յեփթայեայ, Բարա-  
կայ, Գեղենի, Եւ այլոց սրբոց Նա-  
խահարցն: Օրի. ակ. «Որ զաստ-  
ուածային»: Յրց. դկ. «Վո քեզ Աստ-  
ուած» (սարօթն): Մեծ. դկ. «Նա-  
խապետացն»: Ողր. Եւ Տրյ. գՄար-  
գարեիցն ասա՝ դձ. «Որ աւետա-  
լոր» Եւ «Այսօր ժողովուրդը»: Անկ.  
Եւ Յմբ. դկ. «Այսօր ցնծայ զուար-  
ճացեալ»: Ժմտ. «Տէր որ հիմնե-  
ցուցեր»: ճշ. շրկ. աձ. «Ճառա-

գայթ»: ճշ. ընթ. (Ծն 4.1-50.26: Թւ 20.23-30: Բ.Օր 34.5-12: Յես 24.29-33: Ա.Թգ 15.34-16.13: Եբր 11.1-31: Ղկ 20.34-40):

- 8 **Ուր. ԴԶ. Պահը:** Յրց. ինգ. ած. 13 «Օրինեալ ես դու քրիստոս»: Մսկ. խաչի դժ. գ. «Գաւազան զօրութեան»: Յմբ. ապշ.՝ի ծայսէն: ճշ. ընթ. (Ա.Կր 5.9-6.10: Մտ 18.23-35):
- 9 **Ծբ. ԴԿ. Եփեսոսի Ս. Ժողովոյն երկերիւր հայրապետացն:** Օրհ. գձ. «Այսօր սրբոց հայրապետացն» (իւր սարօթ): Մսկ. գձ. «Ով հրաշալի» եւ «Ի սուրբ Երրորդութենէն» (յատեանն: Ի սկսանելն ծածկեն զսեղանն, իսկ յասելն «Ի սուրբ Երրորդութենէն»՝ բանան): Ժմտ. «Չհայրապետականն»: ճշ. շոկ. դժ. «Այսօր երկնայնոցն»: Յմբ. ած. «Սուրբ ես Տէր» եւ «Երկ-

Նաքաղաքացին»: Ճշ. ընթ. (Եզ  
3.16-19: Բ.Տմ 1.6-14: Ղկ 10.16-20):

 Լրումն լուսնի  
Քաղցր եղանակ օդոց

- 10 **Ք Կիր. ԱԶ. Գ. գկնի Պայծառա-** 15  
**կերպութեան:** Յրց. յար. գձ. ա.  
«Փառաւորեմբ զքեզ»: Յմբ. յար.  
աձ. թ. «Ի բարձանց»: Ճշ. ընթ. (Ես  
7.1-9: Ա.Կր 13.11-14.5: Մր 2.1-12):

**Բարեկենդան**  
**Ս. Աստուածածնի Պահոց**

- 11 **ԲՀ. ԱԿ. Ա. օր Աստուածածնի Պա-** 16  
**հոց:** Յրց. ապշ. ակ. գ. «Չանճառ  
եռլթիւն»: Մնկ. եւ Յմբ. ապշ.՝ ի  
ծայնէն: Ճշ. ընթ. (Ա.Կր 14.18-25:  
Մր 2.13-20):

- 12 **Գշ. ԲԶ. Բ. օր Աստուածածնի Պա-** 17  
**հոց:** Յրց. ապշ. բծ. ա. «Օրինեալ  
Տեր Աստուած»: Մնկ. Եւ Յմբ. ապշ.  
'ի ձայնեն: Ճշ. ընթ. (Ա.Կր 14.26-  
40: Մր 2.23-3.5):

ՆԱԽԱՎԱՐԴԻ

Ամանը եւ տարեմուտ

ՏՇԺԸ = 4518

Բում քուականին Հայոց

- 13 **Ղշ. ԲԿ. Գ. օր Աստուածածնի Պա-** 18  
**հոց:** Յրց. ապշ. բծ. բ. աղց. «Որ  
ապրեցուցեր»: Մնկ. Եւ Յմբ. ապշ.  
'ի ձայնեն: Ճշ. ընթ. (Ա.Կր 15.20-  
23: Մր 3.6-12):

- 14 **Եշ. ԳԶ. Դ. օր Աստուածածնի Պա-** 19  
**հոց:** Յրց. ապշ. բծ. գ. աղց. «Որ  
ահաւոր քոյով»: Մնկ. Եւ Յմբ.  
ապշ. 'ի ձայնեն: Ճշ. ընթ. (Ա.Կր  
15.34-49: Մր 3.20-30):

- 15 Ուր. ԳԿ. Ե. օր Աստուածածնի Պա- 20  
հոգ:** Յոց. հնգ. ակ. «Գոհաբանեմք  
զքեզ»: Մնկ. խաչի գկ. գ. «Ով պա-  
հապան»: Յմբ. ապշ.՝ ՚ի ձայնեն:  
ճշ. ընթ. (Ղ.Կր 15.50-57: Մը 3.31-  
4.8):

Յն. եւ լտ. Վերափոխումն  
Ս. Աստուածածնի

- 16 Ծբ. ԴԶ. Տօն Ծողակաթի սրբոյ Եջ- 21  
միածնի, ըստ տեսլեան սրբոյն  
Գրիգորի Լուսաւորչին մերոյ:** Օրի.  
գծ. «Ուրախ լեր սուրբ Եկեղեցի»  
(իւր սարօթն): Ալելուք Եկեղեցւոյ:  
Քրո. «Ասացուք»: «Ս. Աստուած  
որ խաչեցար»: Զկնի Մանկուսքին  
Քրո. «Ս. Եկեղեցեաւս», «Կեցո»,  
«Առ դրան»: Ժմտ. «Տէր մեր եւ  
փրկիչ»: ճշ. շրկ. դժ. «Որ հաստա-  
տեցեր բանիւ»: Միք. «Յրեշտակա-  
յին»:

Յերեկոյին Մես. Եկեղեցւոյ: «Ա. Աստուած որ խաչեցար»: Յմբ. դձ. «Այսօր ժողովեալ սրբոցն» (յատեան): Նախատօնակ՝ Յոց. դձ. «Որ զնախամօրն»: «Ա. զԱստուածածինն», «Կեցո», «Ըսկալ Տէր»: Նաւակատիք: Ճշ. ընթ. (Առ 3.19-26: Եզ 40.3-10: Ա. Պտ 2.1-10: Ստ 16.13-19):

 Վերջին բառորդ լուսնի  
Նուագումն տօրոյ եւ ամպամած

- 17 ✕ Կիր. ԴԿ. ՏՕԽ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ 22  
**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ:** Ի գիշերին  
հսկումն է եւ դիցեն զսրութիւնն ի  
Վերայ բազմոցին: Զկսի «Աստուած  
անեղ»ին Երգ՝ «Աստուածածին  
անարատ»: Յետ. շրկ. դկ. «Արեւելք  
գերարիփին»: Օրի. դձ. «Այսօր ժո-  
ղովեալ սրբոցն» (յատեան, իւր

սարօթն): Ալելուք ծննդեան: Առա-  
ւոտու երգ՝ «Արի Տեր ի հանգիստ  
քո»: Թրզ. «Մայր սուրբ»: «Ս. Աստ-  
ուած որ Եկիր ի փոխումն մօր քո  
Եւ կուսի»: Թափօր: Շրկ. դձ. «Այ-  
սօր ժողովեալ սրբոցն»: Գիրք, Ալե.  
«Յոգին սուրբ Եկեսցե», Աւետա-  
րան, Ասդաստան: Ապա շրկ. դկ.  
«Յիսուս միածին»: Սոլ. Ճիթ.  
«Եղիցին ականջք քո», Աւետարան,  
«Յոգոց»: «Նորաստեղծեալ», «Կե-  
ցո», «Քում ամենազօր Եւ հրաշալի  
գալստեանդ»: Ժմտ. «Աստուածա-  
ծին անհարսնացեալ»: ճշ. շրկ. թձ.  
«Անթառամ ծաղիկ»: Սրբ. «Բազ-  
մութիւնք»: Զկնի Սրբոյ Պատա-  
րագի կատարի օրինութիւն խա-  
ղողոյ:

(Տե՛ս ՚ի Ճաշոցի)

Յերեկոյին Գիրք, Ալե. «Յոգին  
սուրբ Եկեսցե», Աւետարան, Ան-

դաստան: Ապա «Խոնարհեցո» Եւ «Ապրեցո»: Մես. «Տեր ասաց ցիս»: Թրզ. «Մայր սուլրբ»: Յմբ. դկ. «Այսօր զանձառելի» (զերկոսին ի միասին ասա): Զկնի «Դայր գթած»ին ելցեն յատեան: Նախատօնակ, Յրց. դկ. «Որ զՄիածնի» (իւր սարօթն): «Ս. զՎստուածածինն», «Կեցո», «Ընկալ Տեր»: (Ինն օր այսպէս նախատօնակ առնել): ճշ. ընթ. (Երզ 4.9-15, 8.14: Ես 7.10-16: Գդ 3.29-4.7: Ղկ 2.1-7):

ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՐՖԱՅԱՅԻ

Ա. Ա.ՍՏՈՒԱԾԱ.ԺԻՆ ՎԱՆՈՒՅՑ

Միջոց ուտիքն երեք շաբաթ է

- 18 **ԲՀ. ԱԶ. Բ. օր Վերափոխման:** ՅԻ- 23  
**ՃԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅՑ:** Օրի. դկ. «Այսօր զանձառելի» Եւ «Արեւելք գերարփին» (իւր սարօթն): Ղռաւօտու Երզ «Իշցէ որպէս զանձրեւ»: Զկնի

«Ա. Աստուած»ին, Աղ. ՅԱ. «Իշցէ որպէս զանձրեւ», Աւետարան: Զկի «Վրարշական»ին եղա՛ «Յար-սըն ընծայեալ»: «Խնդրեսցուք», «Կեցո», «Թում ամենազօր»: Ժմտ. «Աստուածածին զքեզ»: ճշ. շրկ. դկ. «Աստուածածին ամպ լուսա-տոր»: Սրբ. «Բազմութիւնը»: Յերե-կոյին Մես. «Մեծացուցէ»: Յմբ. դձ. «Այսօր հրաշափառ»: ճշ. ընթ. (Առ 11.30-12.4: Զբ 2.10-13: Բ.Կր 6.16-7.1: Ղկ 1.39-56):

*Հանդիսաւոր հոգեհանդիստ  
վասն հոգւոցն Տէմիրճեան Եր-  
ուանդի եւ Ալիսի՝ բարերարացն  
կաթողիկոսարանիս Ս. Աստուա-  
ծածին մատրան (Պիքֆայա), եւ  
համայն Տէմիրճեան գերդաստանի  
ննջեցելոցն:*

19 Գ2. ԱԿ. Գ. օր Վերափոխման: Օրի. 24  
դձ. «Այսօր հրաշափառ» (իւր

սարօթն): Առաւտու երգ՝ «Արի Տեր ի հանգիստ քո»: Զկնի «Ս. Աստուած»ին, Սղ. ՀԱ. «Իշցէ որպես զանձրեւ»: Ալետարան: «Եական», «Խնդրեսցուք», «Կեցո», «Թում ամենազօր»: Ժմտ. «Աղաչեմք զքեզ սուրբ»: ճշ. շրկ. դժ. «Աստուածածին գերագոյն»: Յերեկոյին Մես. «Իշցէ որպես զանձրեւ»:

Միևնույն գիշերու օրն այսպես երից անզամ կրկնեա զառաւոտու երգսն, զՍաղմոսն, զԱլետարանսն եւ զՃաշու ժամամիւտսն որք 'ի վերոյ գրեցան: ճշ. ընթ. (Երգ 6.3-8: Մղ 3.1-2: Գղ 3.24-29: Ղկ 2.1-7):

Հայկական տոմարաւ՝  
Աւելիաց, 6 օր

- 20 Դշ. ԲԶ. Դ. օր Վերափոխման: 25  
**Պահը:** Օրի. դժ. «Այսօր ժողովեալ»  
 (իւր սարօթն): ՀՄբ. դկ. «Այսօր

զանձառելի»: ճշ. ընթ. (Եղգ 4.9-15,  
8.14: Ես 7.10-16: Գդ 3.29-4.7: Ղկ  
2.1-7):

- 21 **Եշ. ԲԿ. Ե. օր Վերափոխման:** Օրի. 26  
դկ. «Այսօր զանձառելի» (իւր սա-  
րօթն): Հմբ. դձ. «Այսօր հրաշա-  
փառ»: ճշ. ընթ. (Ար 11.30-12.4: Զք  
2.10-13: Բ.Կր 6.16-7.1: Ղկ 1.39-56):
- 22 **Ուր. ԳՁ. 2. օր Վերափոխման:** 27  
**Պահը:** Օրի. դձ. «Այսօր հրաշա-  
փառ» (իւր սարօթն): Հմբ. դձ. «Այ-  
սօր ժողովեալ»: ճշ. ընթ. (Եղգ 6.3-  
8: Մդ 3.1-2: Գդ 3.24-29: Ղկ 2.1-7):
- 23 **Ծք. ԳԿ. Ե. օր Վերափոխման:** Օրի. 28  
դձ. «Այսօր ժողովեալ» (իւր սա-  
րօթն): Հմբ. դկ. «Այսօր զանձա-  
ռելի»: ճշ. ընթ. (Եղգ 4.9-15, 8.14:  
Ես 7.10-16: Գդ 3.29-4.7: Ղկ 2.1-7):

 Ծնունդ լրացնի  
Բարեխառն եղանակ

## 24 ✕ Կիր. ԴԶ. ԸՐ ՎԵՐԱՎԻՌՄԱՆ:

29

Օրի. դկ. «Այսօր զանձառելի» (իւր սարօթ): Յմբ. դձ. «Այսօր հրաշափառ»: Ճշ. ընթ. (Առ 11.30-12.4: Զք 2.10-13: Բ.Կր 6.16-7.1: Ղկ 1.39-56):


Հայկական տոմարաւ՝

Նաւասարդ, 30 օր

Տարեմուտ Ո՞չչե=1475

Հաստատուն եւ սովորական

Թուին Հայոց



Ի Կոյս

Վերջին ամիս ամառնային

## 25 Բ2. ԴԿ. Թ. ՕՐ ՎԵՐԱՎԻՌՄԱՆ:

Օրի. 1

ած. «Այսօր հրաշափառ» (իւր սարօթ): Յմբ. դձ. «Ուրախ լեր մայր անձառ»: Ճշ. ընթ. (Երգ 6.3-8: Մղ 3.1-2: Գղ 3.24-29: Ղկ 2.1-7):

Խոլամական տոմարաւ՝

Բապիի-Լ-առւալ, 30 օր

- 26. ԱԶ. Սրբոցն Յովակիմայ եւ Աննայի՝ ծնողաց սուրբ Աստուածածնին եւ կանանցն իւղաբերից:** Օրի. ակ. «Որ նախիմաց» (իւր սարօթն): Մնկ. ակ. «Աշակերտք Թրիստոսի» (առջ.): Քրզ. «Ս. ճգնաւորօթն»: Աղթ. «Որ ընտրեցեր»: Ժմտ. «Առաքեալք»: Ճշ. շրկ. դժ. «Որ ի բարձրութիւնս»: Յմբ. յար. դկ. ը. «Իւղաբերից կանանցն»: Ճշ. ընթ. (Իմստ 9.9-10.2: Եսթ 10.4-9: Յոյթ 15.8-16.4: Եփ 1.3-12: Մտ 1.17-21):
- 27. ԴՀ. Պահը:** Յրց. ապշ. բժ. դ. «Ուղիղ են ճանապարհը»: Մնկ. եւ Յմբ. ապշ. 'ի ձայնեն: Ճշ. ընթ. (Ա.Կր 15.58-16.11: Մր 4.10-20):
- 28. ԵՀ. ԲԶ. Սրբոյն Երեմիայի մարգարեին:** Օրի. ակ. «Որ զաստուածային»: Յրց. աճ. «Որ յերկնային» (իւր սարօթն): Մեծ. «Չքեզ Երեւ-

Եալ»: Ժմտ. «Տեր որ իիմնեցուցեր»:  
 Ճշ. շրկ. աձ. «Ճառագայթ»: Յմբ.  
 դձ. «Որ յառաջագոյն»: Ճշ. ընթ.  
 (Եր 1.1-10, 38.1-13: Բ.Պտ 2.9-22:  
 Ստ 2.16-18):

- |    |   |   |
|----|---|---|
| 29 | <b>Ուր. ԲԿ. Պահը:</b> Յրց. հնգ. թկ.<br>«Արարիչ եւ մարդասէր»: Մնկ.<br>Խաչի թկ. թ. «Խաչն կենարար»:<br>Յմբ. ապշ. 'ի ծայսէն: Ճշ. ընթ.<br>(Ա.Կր 16.12-24: Մր 4.26-34):   | 5 |
| 30 | <b>Ծբ. ԳԶ. Սրբոց առաքելոց՝ Թով-</b><br><b>մայի, Յակոբայ եւ Ծմաւոնի:</b><br>(Չգիրը եւ զԱւետարանն սուրբ<br>Յակոբայ պահոց Երեքաբթի<br>աւուրն կարդա): Օրի. գձ. «Երա-<br>նելի սուրբ առաքեալը» (իւր սա-<br>րօնը): Մեծ. աձ. «Այսօր նոր ժողո-<br>վուրոդ»: Մնկ. ակ. «Աշակերտը<br>Թրիստոսի»: Ժմտ. «Առաքեալը Աս-<br>տուծոյ»: Յմբ. աձ. «Սնուրը եւ Տեր»<br>եւ «Ի քեն հայցեմք»: | 6 |

Չկնի «Յայր գթած» աղօթիցն  
Նախատօնակ արա: Ծրկ. ակ. «Որ  
Նախիմաց» (իւր սարօքն): «Ո.  
զԱստուածածինն», «Կեցո», «Ըն-  
կալ Տէր»: Ճշ. ընթ. (Իմստ 9.13-  
10.3: Մք 7.18-20: Ա.Կր 12.28-13.3:  
Յհ 20.24-31):

- 31 **Ք Կիր. ԳԿ. Գ. զկնի Վերափոխ-  
ման: Տօն Գիւտի Գօտույ սուրբ  
Աստուածածի:** Չկնի «Ճանա-  
պարի մոլորելոց»ին երգ՝ «Զայսիւ  
առ քեզ»: Օրի. գկ. «Երգեցէք  
որդիք» (իւր սարօքն): Ալելուք  
ծննդեան: Առաւօտու երգ՝ «Իջցէ  
որպէս զանձրեւ»: Թրզ. «Մայր  
սուրբ»: «Ո. Աստուած որ յարեալ»,  
Սղ. ճթ. «Ի վայելչութիւն», Աւե-  
տարան, «Նորաստեղծեալ», «Կե-  
ցո», «Քում ամենազօր»: (Ճաշու  
ամենայն ինչ յարութեան է):  
Յերեկոյին, Թրզ. «Մայր սուրբ»:

Յմբ. դձ. «Լոր Սիոն»: «Ա. զԱստ-  
ուածածինն», «ԿԵցո», «Ընկալ  
Տեր»: Ճշ. ըՆթ. (Ես 9.8-19: Բ.Կր  
1.1-11: Մը 4.35-41):

Առաջին ժառորդ լուսնի  
Պարզ, պայծառ եւ մերք ալպալած



## ՍԵՊՏԵՄԲԵՐ

30

- 1 ԲՀ. ԴԶ. Սրբոցն՝ Ստեփանոսի  
Ովկնեցւոյն, Եւ Վկայիցն՝ Գոհարին-  
եայ, Ծամիդոսի, Տուքիկոսի Եւ  
Ռատիկոսի: Օրի. Մրտ. ՚ի ծայնեն:  
Յրց. Մրտ. գծ. ա. «Որք զտան-  
շանս»: Մնկ. դծ. ա., բ. «Չքեզ  
կարդային» Եւ «Ով սուրբ Գեղրդ»:  
Ժմտ. «Ի տաճարի»: Յմբ. դկ.  
«Մարտիրոս Եւ Վկայ»: Ճշ. ընթ.  
(Առ 10.1-7: Ես 44.24-26: Եթր 4.11-  
15: Ստ 5.1-12):

- 2 **Գ2. ԴԿ. Արբոց մարզարեիցն՝ Եղեկիւի, Եղոի եւ Զաքարիայի՝ հօրն Յովհաննու Սկրտցի:** Օրի. ակ. «Որ զաստուածային» (հւր սարօթն): Մնկ. եւ Հմբ. դձ. «Որ զյառաջագոյն»: Ժմտ. «Տէր որ հիմնեցուցեր»: ճշ. շրկ. աձ. «Ճառագայթ անճառ»: ճշ. ընթ. (Եզ 18.30-32: Ա.Կր 2.6-10: Մտ 23.34-39):
- 3 **Դ2. ԱԶ. Պահը:** Յոց. ապշ. թկ. ա. աղց. «Յարցն մերոց օրինեալ»: Մնկ. եւ Հմբ. ապշ. 'ի ծայնեն: ճշ. ընթ. (Բ.Կր 3.4-17: Մր 6.45-56):
- 4 **Ե2. ԱԿ. Արբոցն՝ Յովհաննու Կարապետին եւ Յոբայ արդարոյն:** Օրի. գձ. «Չմարզարէ բարձրելոյն» (հւր սարօթն): Մնկ. եւ Հմբ. դկ. «Մարզարէց գերագոյն»: Ժմտ. «Տէր որ հիմնեցուցեր»: ճշ. շրկ. դկ. «Այսօր ցնծայ»: ճշ. ընթ. (Առ 20.6-22: Յոբ 42.12-16: Ողբ 3.22-

56: Գրծ 13.25-33: Յկ 5.7-11: Ստ  
14.1-12):

- 5 Ուր. ԲԶ. Պահը:** Յրց. ինգ. գձ. 12  
«Օրինեմք զբեզ»: Մսկ. խաչի թձ.  
գ. «Ապաւինեցաք»: Հմբ. ապշ.՝ ի  
ձայնեն: Ճշ. ընթ. (Բ.Կր 5.6-18: Մր  
7.24-30):


Խպլ. Ծնունդ Մարգարէիմ  
(Մառլէտ)

- 6 Ծբ. ԲԿ. Նիկիոյ Ս. Ժողովոյն Երեք** 13  
**հարիւր ութեւտասն հայրապե-**  
**տացն:** Օրհ. գձ. «Այսօր սրբոց հայ-  
րապետացն» (իւր սարօթն): Մսկ.  
գձ. «Ով հրաշալի» եւ «Ի սուրբ  
Երրորդութենեն» (յատեանս: Ի  
սկսանելն ծածկեն զսեղանն, իսկ  
յասելս «Ի սուրբ Երրորդութենեն»՝  
բանան): Ժմտ. «Զհայրապետա-  
կանն»: Ճշ. շրկ. դձ. «Այսօր Երկ-  
նայնցն»: Հմբ. աձ. «Սուրբ Ես

Տե՛ռ» Եւ «Երկարադաքացին»: Ճշ.  
ընթ. (Եզ 44.23-24: Եբր 12.1-7: Յհ  
14.25-31):

- 7 **❖ Կիր. ԳԶ. Դ. զկնի Վերափոխ-** 14  
ման: Յոց. յար. զկ. ա. «Անձառելի  
ընութիւն»: Յմբ. զձ. ա.,թ. «Իւղա-  
բեր Եւ սուրբ» Եւ «Այսօր յարու-  
թիւն»: Ճշ. ընթ. (Ես 13.2-11: Բ.Կր  
7.4-16: Մը 7.31-37):

**Բարեկենդան Ս. Խաչի Պահոց**



Լրումն լուսնի

Թերեւ անձրեւք

- 8 **ԲՀ. ԳԿ. Ա. օր Ս. Խաչի Պահոց:** 15  
Տօն Ծննդեան սուրբ Կուսին Սար-  
իամու Աստուածածին՝ ի յԱննայ:
- Զկնի «Ճանապարհ Մոլորելոց»ին  
երգ՝ «Զայսիւ առ քեզ»: Օրի. զկ.  
«Երգեցէք որդիք» (իւր սարօթն):  
Ալելուք ծննդեան: Քրզ. «Մայր

սուրբ»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Ապա գիրք, Վլէ. «Ուրախ լեր բերկրեալդ»: Աւետարան: «Արարչական», «Խնդրեսցուք», «Կեցո», «Թում ամենազօր»: Ժմտ. «Աղաչեմք զքեզ»: Սրբ. «Բազմութիւնք»: Յմբ. դձ. «Նոր Սիոն»: «Ս. զԱստուածածինն», «Կեցո», «Ընկալ Տեր»: Ճշ. ընթ. ճշ. ընթ. (Բ.Կր 8.1-15: Սր 8.1-9: **Գիրք եւ Աւետարան**. - Առ 31.29-31: Ես 61.9-10: Գդ 3.24-29: Սր 1.1-17):

- 9 **Զ. Դ. Բ. օր Ս. Խաչի Պահոց:** Յրց. 16  
ապշ. բկ. թ. «Որ հարցն մերոց»:  
Մսկ. եւ Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ.  
ընթ. (Բ.Կր 8.16-24: Սր 8.10-21):
- 10 **Դ. Դ. Գ. օր Ս. Խաչի Պահոց:** 17  
Յրց. ապշ. բկ. գ. «Մանկունքն գերեալք»: Մսկ. եւ Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ. (Բ.Կր 9.1-9: Սր 8.22-26):

- 11 **Եշ. ԱԶ. Դ. օր Ս. Խաչի Պահոց:** 18  
Յոց. ապշ. թկ. դ. աղց. «Տեր Աստ-  
ուած հարցն մերոց»: Մնկ. եւ Յմբ.  
ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ. (Բ.Կր  
9.10-10-6: Մր 9.13-26):
- 12 **Ուր. ԱԿ. Ե. օր Ս. Խաչի Պահոց:** 19  
Յոց. ինգ. գկ. «Բանդ Աստուած»:  
Մնկ. Խաչի ակ. ա. «Սեղան քո»:  
Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ.  
(Բ.Կր 10.7-17: Մր 9.37-49):
- 13 **Ծր. ԲԶ. Տօն է սրբոյ Եկեղեցւոյ՝ ի 20**  
**Նաւակատիս սրբոյ Խաչին:** Օրի.  
թկ. «Ի վերայ վիմի հաւատոյ» (իւր  
սարօթն): Ալելուք Եկեղեցւոյ: Յոց.  
«Ասացուք»: «Ս. Աստուած որ  
խաչեցար»: Չկնի Մանկունքին  
Յոց. «Ս. Եկեղեցեաւս», «Կեցո»,  
«Առ դրան»: Ժմտ. «Չխաղաղու-  
թիւն»: Ճշ. շրկ. ակ. «Սեղան քո  
Տեր»: Սրբ. «Յրեշտակային»: Յերե-  
կոյին Սես. Եկեղեցւոյ, «Ս. Աստ-

ուած որ խաչեցար»: Յմբ. աձ. «Որ զանարատ» (յատեան): «Ա. Խաչիս», «Կեցո», «Պահպանեա»: Նաւակատիք: Ճշ. ընթ. (Ղր 3.9-17: Ես 66.12-16: Ա.Տմ 3.14-16: Ցհ 10. 22-42):

- 14 **❖ Կիր. ԲԿ. ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ 21  
ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ:** Ի գիշերին հըսկումն է եւ դիցեն զսրբութիւնն ի վերայ բազմոցին: Ի տեղի հանգըստեան շարականի՝ «Այսօր անճառ» եւ «Տարոածեալ»: Աւետարան Խաչելութեան: Զկսի «Նորոգող»ին երգ՝ «Տրտմահաղորդ»: Յետ. շրկ. դձ. «Զօրութիւն սուրբ խաչի»: Օրի. աձ. «Որ զանարատ բազուկս քո» (յատեան, իւր սարոց): Ալելուք խաչի: Թրգ. «Ասացուք»: «Ա. Աստուած որ խաչեցար»: Թափոր: Շրկ. աձ. «Որ զանարատ»: Գիրք, Սղ. Դ. «Նշանե-

ցաւ», Աւետարան, Անդաստան: Ապա «Նորաստեղծեալ», «Խընդրեսցուք», «Թում ամենազօր»: Շրկ. բկ. «Խաչի քո Զրիստոս Երկիրպագանեմք, եւ զսուրբ թաղումնդ քո մեծացուցանեմք, եւլ: Փառք սուրբ խաչիդ՝ ալելուիա, խաչեցելոյդ՝ ալե., սուրբ յարութեանդ՝ ալե. եւլս.» (որպէս ի Չատկին): Ապա «Ս. Խաչիւ», «Կեցո», «Պահպանեա»: Ժմտ. «Առաջի պատուական»: Սրբ. «Ո՞վ է որպէս»: Յմբ. դձ. «Զօրութիւն»:

Յերեկոյին մեծահանդէս թափօր խաչերացի (Տելս 'ի Տօնացուցի): ճշ. միսթ. (Ես 49. 13-23: Գոլ 6.14-18: Յհ 3.13-21):

Յն. եւ Լտ. Խաչվերաց

Վերջին քառորդ լուսնի  
Փոփոխութիւն օդոց

- 15 ԲՀ. ԳԶ. Տօն Ա. Խաչի: ՅԻՇԱՏԱԿ** 22  
**ՍԵՊԵԼՈՑ:** Օրհ. դձ. «Զօրութիւն սուրբ խաչի» (իւր սարօքն): Մնկ. Խաչի գձ. ա. «Փայտ կենաց»: «Խնդրեսցուք», «Թում ամենազօր»: Ճշ. շրկ. դձ. «Ի յերկնից»: Սրբ. «Ո՞վ է որպես»: Յմբ. բկ. «Խաչն կենարար»: Ճշ. ընթ. (Ես 65.22-25: Ա.Կր 2.6-10: Յհ 3.22-36):
- 16 ԳՀ. ԳԿ. Տօն Եկեղեցւոյ:** Օրհ. բկ. 23 «Խաչն կենարար» (սարօքն): Ալելուք Եկեղեցւոյ: Քրզ. «Ասացուք»: «Ա. Աստուած որ խաչեցար»: Մնկ. դկ. «ԷջՄիածինն»: «Ա. Եկեղեցեաւ», «Կեցո», «Առ դրան»: Ժմտ. «Զիաղաղութիւն»: Յմբ. գձ. «Ուրախ լեր սուրբ Եկեղեցի»: «Ա. Եկեղեցեաւ», «Կեցո», «Ի մեջ տաճարիս»: Ճշ. ընթ. (Բրբ 4.36-5.9: Եբբ 3.1-6: Յհ 2.12-22):
- 17 ԴՀ. ԴԶ. Պահը: Տօն Եկեղեցւոյ:** 24

Օրի. գձ. «Ուրախ լեր» (իւր սարօթ): Թրզ. «Ասացուք»: Մնկ. գձ. «Այսօր ուրախացեալ»: «Ս. Եկեղեցեաւ», «Կեցո», «Առ դրան»: Յմբ. թկ. «Անպատումն կառք»: «Ս. Եկեղեցեաւ», «Կեցո», «Ի մէջ տաճարիս»: Ճշ. ընթ. (Սկ 3.14-18: Եբր 9-11-15: Մտ 16.13-19):

- 18 **Եշ. ԴԿ. Տօն Եկեղեցոյ:** Օրի. թկ. 25  
«Անպատումն կառք» (սարօթ):  
Թրզ. «Ասացուք»: Մնկ. ակ. «Որ ի սկզբանե»: «Ս. Եկեղեցեաւ», «Կեցո», «Առ դրան»: Յմբ. թձ. «Անպական սուրբ զիսաչն»: «Ս. Եկեղեցեաւ», «Կեցո», «Ի մէջ տաճարիս»: Ճշ. ընթ. (Ես 2.1-6: Եբր 12.18-27: Մտ 21.12-17):
- 19 **Ուր. ԱԶ. Պահը: Տօն Ս. Խաչի:** 26  
Օրի. թձ. «Անապական սուրբ զիսաչն» (իւր սարօթ): Ալելուք Խաչի: Թրզ. «Ասացուք»: Մնկ.

Խաչի աճ. գ. «Յրաշակերտ»: «Ա. Խաչիս», «Կեցո», «Պահպանեա»: Ժմտ. «Առաջի պատուական»: Յմբ. գձ. «Որ ծագեցեր»: «Ա. Խաչիս», «Կեցո», «Պահպանեա»: Ծշ. ընթ. (Զք 14.5-11: Փլա 2.5-11: Ցհ 19.16-22):

- 20 **Ծբ. ԱԿ. Տօն Ա. Խաչի:** Օրհ. գձ. «Որ 27 ծագեցեր» (իւր սարօթն): Յրզ. «Ասացութ»: Մևկ. դկ. ստեղի՝ «Պարունակեայ»: «Ա. Խաչիս», «Կեցո», «Պահպանեա»: Յմբ. գկ. «Այսօր երեւումն»: «Ա. Խաչիս», «Կեցո», «Պահպանեա»: Ծշ. ընթ. (Ես 51.4-11: Ա.ՏՄ 6.13-16: Ցհ 7.37-52):
- 21 **✖Կիր. ԲԶ. Բ. զկսի Ա. Խաչի:** Հրց. 28 յար. դձ. ա. «Որ Եկիր կամաւ»: Մեծ. դձ. «Աթոռ Յրովքեական»: Յմբ. յար. բձ. ա. «Ի գերեզման»: Ծշ. ընթ. (Ես 14.3-17: Բ.Կր 10.18-11.10: Մր 10.1-12):

Գոհարանական Ա.դօք.ք'  
Հայաստանի Հանրապետութեան  
վերանկախացման տօնին առիթով

**Բարեկենդան Վարագայ  
Ս. Խաչի Պահոց**

(՞) Ծնունդ լուսնի  
Անձրեւաբեր ամպեր

- |    |   |    |
|----|---|----|
| 22 | <b>Բ2. ԲԿ. Պահօց: Սրբոցն՝ Սամասայ<br/>եւ Փիլիկտիմոնի եւ Սիմեոնի Սիր-<br/>նակեցւոյն:</b> Օրհ. մրտ. 'ի ծայնէն:<br>Հրց. մրտ. դձ. ա. «Յուսացեալքն»:<br>Մնկ. եւ Յմբ. մրտ. 'ի ծայնէն:<br>Ժմտ. «Ի տաճարի»: Ճշ. ընթ. (Առ<br>8.9-11: Ես 55.10-13: Բ.Կր 5.1-5: Ղկ<br>21.12-19): | 29 |
| 23 | <b>Գ2. ԳԶ. Պահօց: Սրբոց կուսանացն՝<br/>Փերյոնեայ, Սարիանեայ եւ Ծու-<br/>շանայ՝ դստեր մեծին Վարդանայ:</b>  | 30 |

Օրի. մրտ.՝ ՚ի ծայնեն: Յոց. մրտ.  
դժ. թ. «Սուլը ես Տէր»: Մնկ. եւ  
Յմբ. դկ. «Յիշատակ քրիստոսի»:  
Ժմտ. «Յարսնացեալք»: ճշ. ընթ.  
(Առ 23.15-25: Ովս 14.6-8: Բ.Կր  
6.16-7.1: Ղկ 6.20-23):

Հայկական տոմարաւ՝

Հռոխ, 30 օր

Սշնանամուտ եւ հասարակաց  
տիւ եւ գիշեր լինին հաւասար

- 24 ՚Ռ. ԳՎ. Պահը: Յոց. ապշ. թկ. ե. 1  
աղց. «Մանկանցն զձայնն»: Մնկ.  
եւ Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնեն: ճշ. ընթ.  
(Բ.Կր 11.10-23: Սր 10.17-23):

❖ ՚ Կշիռն

Առաջին ամիս գարնանային

Իսլամական տոմարաւ՝

Բավիթ-Էլ-սանի, 29 օր

- 25 **Եշ. ԴԶ. Պահը:** Արբոց հայրապետացն՝ Բարաղամու, Ամթիմոսի եւ Երանոսի:
- Օրի. մրտ.՝ ի ձայնեն: Յրց. մրտ. դձ. գ. «Որք հաղորդեցան»: Մսկ. եւ Յմբ. գձ. «Յանդիսացեալք»: Ժմտ. «Չհայրապետական»: Ճշ. շրկ. գձ. «Չառաջնորդս»: Ճշ. ընթ. (Խմստ 10.9-12: Սդ 2.5-7: Ա.Պտ 5.1-7: Ցհ 10.11-16):
- 26 **Ուր. ԴԿ. Պահը:** Յրց. ինգ. դկ. 3 «Յաւիտենից Աստուած»: Մսկ. խաչի դկ. բ. «Խաչի քո»: Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ. (Բ.Կր 11.30-12.9: Սդ 10.28-33):
- 27 **Ծբ. ԱԶ. Արբոցն Գեղրգայ զօրավարին եւ Աղոկտոսի եւ Ռոմանոսի Երգեցողին:** Օրի. ակ. «Ամենասուրբ Երրորդութեանն» (սարօթն): Մսկ. եւ ճշ. շրկ. դձ. «Ով սուրբ Գեղրգ»: Ժմտ. «Չօրական եւ վը-

կայ»: Յերեկոյին Մես. «Ետուր  
երկիրածաց»: «Ս. Աստուած որ  
խաչեցար»: Յմբ. ակ. «Նշանաւ  
ամենայաղթ»: «Ս. խաչիւ», «Կե-  
ցո», «Պահպանեա»: Ճշ. ընթ.  
(Իմստ 8.19-9.5: Ես 42.1-8: Բ.Կր  
1.3-7: Ղկ 12.2-9):

- 28 **‡ Կիր. Ակ. Գ. գկնի Ս. Խաչի:** 5  
**ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՄՐԲՈՅ ԽԱՉԻՆ:**  
 Ի տեղի Յանգստեան շարականի՝  
 «Այսօր Անճառ» եւ «Տարածեալ»:  
 Աւետարան խաչելութեան: «Բար-  
բառելով»: Երգ՝ «Զարհուրեցան»:  
 Օրի. ակ. «Նշանաւ» (յատեան,  
 իւր սարօթ): Թրգ. «Ասացուք»:  
 «Ս. Աստուած որ խաչեցար»: Գիրք,  
 Սղ. Դ. «Նշանեցաւ», Աւետարան:  
 «Նորաստեղծեալ»: «Խնդրեսցուք»,  
 «Ջում ամենազօր»: Ժմտ. «Առաջի  
պատուական»: Սրբ. «Ո՞վ է որ-  
պէս»: Յմբ. գծ. «Ճրաշափառ տե-

սութիւն»: «Ս. խաչիս», «Կեցո», «Պահպանեա»: Ճշ. ընթ. (Առ 3.18-26: Ես 65.22-25: Գդ 6.14-18: Ստ 24.30-36):

Միջոց ուտիքն եօթն շաբաթ է

- 29 **Բ2. ԲԶ. Սրբոցն՝ Դաւթի Դևեցւոյն,** 6  
**եւ սրբոց վկայիցն՝ Դամբեռոյի եւ**  
**Դամբեռուհեոյն:** Օրհ. մրտ. 'ի ծայ-  
 նեն: Յրց. մրտ. դկ. ա. «Առ թեզ  
 Աստուած»: Մսկ. եւ Յմբ. բկ.  
 «Լցեալ աստուածային»: Ժմտ. «Ի  
 տաճարի»: Ճշ. ընթ. (Առ 13.1-7: Սր  
 7.18-20: Եբր 12.1-7: Դկ 13.22-30):

❖ Առաջին բառորդ լուսնի  
 Ամպամած, հով եւ քերեւ անձրեւք

- 30 **Գ2. ԲԿ. Սրբոցն՝ Եւստաքեռոյի, եւ** 7  
**կնոջ Նորա Թեոփիստեայ,** եւ Եր-  
 կուց որդւոցն, եւ սրբոց կուսա-

O. 190

ՍԵՊՏԵՄԲԵՐ

L.

**Նացն՝ Երմոնեայ եւ Նեկտարին-  
եայ:** Օրհ. Մրտ. 'ի ձայնեն: Յրց.  
Մրտ. դկ. թ. «Որ զիրաշափառ»:  
Մսկ. եւ Յմբ. Մրտ. 'ի ձայնեն:  
Ժմտ. «Ի տաճարի»: Ծշ. ընթ. (Ողբ  
3.22-56: Բ.Տմ 3.10-15: Մտ 5.1-12):

Լ. Արբոյն Գրիգորի  
Լուսաւորչին մերոյ



## ՀՈԿՏԵՄԲԵՐ

31

- |   |   |   |
|---|---|---|
| 1 | <b>Դ2. ԳԶ. Պահը:</b> Յոց. ապշ. գծ. ա.<br>«Փառաւորեալ անուն քո»: Սսկ. եւ<br>Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ.<br>(Բ.Կր 12.10-18: Մը 10.35-45):   | 8 |
| 2 | <b>Ե2. ԳԿ. Սրբոց իշխանացն՝ Սա-<br/>հակայ եւ Յամազասպայ:</b> Օրի.<br>Մրտ. ած. ա. «Չքեզ արդար եւ<br>ուղիղ»: Սսկ. եւ Յմբ. դկ. ստեղի՝<br>«Արիացեալք»: Ժմտ. «Ի տաճա-<br>րի»: Ճշ. ընթ. (Իմստ 6.11-21: Եր<br>17.7-8: Յո 8.18-26: Յհ 16.1-4): | 9 |

- 3 **Ուր. ԴԶ. Պահը:** Յոց. ինգ. աձ. 10  
«Օրինեալ ես դու»: Մսկ. Խաչի դձ.  
ա. «Գաւազան զօրութեան»: Յմբ.  
ապշ.՝ ի ձայնեն: ճշ. ընթ. (Բ.Կր  
12.19-13.4: Սր 11.15-26):
- 4 **Ծբ. ԴԿ. Սրբոց Եւթանասուն եւ 11  
Երկու Աշակերտացն Քրիստոսի:**  
Օրի. դկ. «Խմաստովին Երկսա-  
յին» (իւր սարօթն): Մսկ. դկ. ստե-  
ղի՝ «Առաքեալք Վստուծոյ»: Ժմտ.  
«Առաքեալք»: ճշ. շրկ. ակ. «Որ սի-  
րողդ էք»: Յմբ. աձ. «Սուլը ես Տեր»  
եւ «Ի քէն հայցեմք»: «Խնդրես-  
ցուք», «Կեցո», «Թագաւոր խաղա-  
ղութեան»: ճշ. ընթ. (Խմստ 9.9-  
10.2: Ելք 15.27-16.1: Բ.Կր 2.14-3.3:  
Ղկ 10.1-9):
- 5 **Ք Կիր. ԱԶ. Դ. զկնի Ս. Խաչի:** Յոց. 12  
յար. դձ. թ. «Որ բարեբանեալդ ես»:  
Մեծ. դձ. «Աստուածածին գերա-  
գոյն»: Յմբ. յար. աձ. գ. «Ընդ կա-

նայմ»: ճշ. ընթ. (Ես 17.7-14: Բ.Կր  
13.5-13: Սր 11.27-33):

*Հանդիսաւոր հոգեհանգիստ  
վասն հոգւոյն Մանուկեան Եղիշէի՝  
ազգային բարերարին:*

- 6 **Բ2. ԱԿ.** Սրբոցն՝ Փոկասու հայրա- 13  
պետին, եւ Երանոսի հետեւողին  
առաքելոց: Օրի. մրտ.՝ ի ծայնեն:  
Յրց. մրտ. ակ. ա. «Սուրբ Աստուած  
արարիչ»: Սևկ. եւ Յմբ. մրտ.՝ ի ծայ-  
նեն: Ժմտ. «Չհայրապետական»:  
ճշ. ընթ. (Ար 27.1-6: Ես 43.16-21:  
Բ.Կր 11.21-29: Սր 6.45-56):
- 7 **Գ2. ԲԶ.** Սրբոց կուսանացն՝ Թեկոյի, 14  
Վարվառեայ եւ Պեղագեայ: Օրի.  
մրտ.՝ ի ծայնեն: Յրց. մրտ. ակ. բ.  
«Որ բարձրեալդ ես»: Սևկ. եւ Յմբ.  
դկ. «Քեւ պարծի այսօր»: Ժմտ.  
«Նարսնացեալք Ջրիստոսի»: ճշ.  
ընթ. (Եղգ 8.14: Ես 61.9-11: Ա.Պտ  
5.8-11: Ղկ 12.32-40):

 Լրումն լուսնի  
Անձրեւաբեր Քամիներ

- 8 **Դշ. ԲԿ. Պահը:** Յրց. ապշ. գծ. թ. 15  
«Փառաւորեալ է անուն քո»: Մսկ.  
Եւ Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: ճշ. ընթ.  
(Գդ 1.1-10: Մր 12.1-12):
- 9 **Եշ. ԳԶ. Սրբոցն՝ Պանդալեոնի բը-** 16  
**ժըշկին, Երմողեայ քահանային, Եւ**  
**Եւպրաքսեայ կուսին:** Օրի. մրտ.՝ ի  
ձայնեն: Յրց. մրտ. բծ. ա. «Անո-  
խակալ եւ բարեգութ»: Մսկ. Եւ  
Յմբ. դկ. «Յիշատակ Ջրիստոսի»:  
Ժմտ. «Ի տաճարի»: ճշ. ընթ. (Առ  
4.20-27: Եր 15.19-20: Ա.Կր 12.1-7:  
Մտ 9.35-10.1):
- 10 **Ուր. ԳԿ. Պահը:** Յրց. ինգ. ակ. 17  
«Գոհաբանեմք զքեզ»: Մսկ. Խաչի  
գկ. գ. «Ով պահապան»: Յմբ.  
ապշ.՝ ի ձայնեն:

Յերեկոյին նախատօնակ արա:  
Ծրկ. ակ. «Որք զարդարեցին» (իւր  
սարօթն): ճշ. ընթ. (Գդ 1.11-24: Մը  
12.18-34):

- 11 չ Ճ. ԴԶ. ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ 18  
ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՅ՝ ՄԵՍՐՈ-  
ՊԱՅ, Եղիշէի, Մովսիսի քերթողա-  
հօրն, Դաւթի ակյաղթ փիլիսոփա-  
յին, Գրիգորի Նարեկացւոյն եւ  
Ներսիսի Կլայեցւոյն: Օրի. ակ.  
«Որք զարդարեցին» (իւր սարօթն):  
Ժմտ. «Զհայրապետականն»: ճշ.  
շրկ. դժ. «Որ զշնորհս»: Յմբ. ած.  
«Սուլր եւ Տեր» եւ «Երկնաքաղա-  
քացին»: ճշ. ընթ. (Իմստ 8.7-10:  
Ամս 5.10-14: Ա.Կր 12.5-11: Մը 7.  
6-12):

Տօն ազգային եւ եկեղեցական, ի  
յիշատակ գիւտի նշանագրացն հայոց  
եւ քարգմանութեան Սուլր Գրոց

- 12 ✕ Կիր. ԴԿ. Ե. զկսի Ս. Խաչի: Յոց. 19  
 յար. դձ. գ. «Որ՝ ի քառակերպեան»:  
 Մեծ. դձ. «Խորանայարկ»: Յմբ.  
 յար. գձ. ա..թ., գ. «Էւղաբեր եւ  
 սուլը», «Այսօր յարութիւն Զրիս-  
 տոսի» եւ «Ի խաչանիշ փայտէն»:  
 ճշ. ընթ. (Ես 19.1-11: Գդ 2.1-10: Մը  
 12.35-44):
- 13 Բշ. ԱԶ. Գիւտ Նշխարաց սրբոյն 20  
 Գրիգորիսի Աղուանից Կաթողի-  
 կոսին, եւ սրբոց հարցն՝ Անտոնի,  
 եւ Կրօնիդեայ, Թաթլոյ, Վարոսի,  
 Թումասու, եւ Եօթև Խոտանարա-  
 կացն, որը յինսակնեան վանսն  
 կատարեցան: Օրի. դկ. «Արմատ  
 ճշմարիտ» (Տե՛ս թձ. «Ով երջա-  
 նիկ»): Յոց. Թոռանցն ակ. «Որ  
 զլոյս աստուածային» (սարօթն):  
 Ժմտ. «Զհայրապետական» եւ  
 «Ճգնաւորք Զրիստոսի»: ճշ. շրկ.  
 գկ. «Յովիւ քաջ»: Յմբ. թձ. «Յա-

Լուրց վերջին ժամանակի»: ճշ.  
ընթ. (Եր 33.14-22; Ես 18.7; Եբր  
10.32-36; Ղկ 10.21-24):

Պանդիստի ծիծեռնակն

 Վերջին բառորդ լուսնի  
Անձրեւաբեր հողմունք

- 14 **Գշ. ԱԿ. Սրբոց առաքելոցն՝ Անան-** 21  
իայի, Մատաթիայ, Բառնաբայ,  
Փիլիպպոսի, Յովհաննու, Շիղայի,  
եւ Սիղուանոսի: Օրի. ղկ. «Խմաս-  
տութիւն երկնային» (իւր սարօցն):  
Մնկ. եւ Յմբ. ակ. «Աշակերտը  
Զրիստոսի»: Ժմտ. «Առաքեալք»:  
ճշ. շրկ. ակ. «Որ սիրողի էք»: ճշ.  
ընթ. (Չը 8.1-3: Գրծ 9.1-22: Ղկ 9.1-6):
- 15 **Դշ. ԲԶ. Պահը:** Յոց. ապշ. գծ. գ. 22  
աղց. «Օրինեալ ես Տեր»: Մնկ. եւ  
Յմբ. ապշ. 'ի ծայնեն: ճշ. ընթ. (Գդ  
2.11-20: Մր 13.14.23):

- 16 **Եշ. ԲԿ. Սրբոց՝ Դիմեսիոսի Արիս-պագացւոյն, եւ առաքելոցն՝ Տի-մոթէոսի եւ Տիտոսի:** Օրի. դկ. «Իմաստութիւն Երկնային» (իւր սարօթն): Մնկ. եւ Յմբ. ակ. «Աշակերտք Թրիստոսի»: Ժմտ. «Առաքեալք»: Ճշ. շրկ. ակ. «Որ սիրողդեք»: Ճշ. ընթ. (Ես 33.2-6: Գրծ 17.16-34: Բ.Թս 1.1-12: Ղկ 10.1-7):
- 17 **Ուր. ԳԶ. Պահօ:** Յոց. հնգ. թձ. «Որ թագաւորդ ես»: Մնկ. Խաչի գձ. ա. «Փայտ կենաց»: Յմբ. ապշ. 'ի ծայնեն: Ճշ. ընթ. (Գդ 2.20-3.12: Մր 13. 24-37):
- 18 **Ծբ. ԳԿ. Սրբոց աւետարանչացն՝ Սատթէոսի, Սարկոսի, Ղուկասու, եւ Յովհաննու:** Օրի. գձ. «Երանելի սուրբ առաքեալք» (իւր սարօթն): Մնկ. ակ. «Աշակերտք Թրիստոսի» (Փառք Յօրն զԳ. տունն ասել, իսկ Այժմ եւ միշտոն՝ Բանին կենաց,


յիշելով զանուանս աւտարան-  
չացն): Զկսի «Տերն յետ ստեղծ-  
ման»ին երգ՝ «Սաքրապէս օրի-  
նակի» եւ «Յուլախութիւնս»: Ժմտ.  
«Ղռաքեալք»: Ծշ. շրկ. ակ. «Որ սի-  
րողդ էք»: Յմբ. աձ. «Սուլր ես Տեր»  
եւ «Ի քեն հայցեմք»: Ծշ. ընթ.  
(Իմստ 9.13-10.2: Եզ 1.3-11: Զք  
6.1-8: Եփ 4.7-13: Ղկ 6.13-19):

- 19 **❖ Կիր. ԴԶ. Զ. զկսի Ս. Խաչի:** 26  
Յրց. յար. դձ. դ. «Յորժամ ’ի խա-  
չին»: Մեծ. դձ. «Մայր լուսոյ»: Յմբ.  
յար. բկ. բ. գ. «Քրիստոս յարեաւ ի  
մեռելոց» եւ «Առաւօտեան սուլր  
կանայքն»: Ծշ. ընթ. (Ըս 20.2-21.6:  
Գդ 4.3-18: Ղկ 4.14-24):
- 20 **ԲՀ. ԴԿ. Սրբոցն՝ Ղունկիանոսի** 27  
**հարիւրապետին որ հաւատաց ’ի**  
**խաչելութիւնն Քրիստոսի,** եւ Յով-  
**սեփայ Աստուածահօրն եւ Յովսե-  
փայ Արիմաթացւոյն, եւ բարեկա-**

**մին քրիստոսի Դազարու, եւ քերցն  
Նորա՝ Մարթայի եւ Սարիամու:**  
Օրհ. դկ. «Իմաստութիւն Երկնա-  
յին» (իւր սարօթն): Մնկ. դկ. ստե-  
ղի՝ «Յովսէփ քնզ հաւատացեալ»:  
Ժմտ. «Առաքեալք»: Ճշ. շրկ. գձ.  
«Յովսէփ ճշմարիտ»: Յմբ. յար.  
դկ. ը. «Իւղաբերից կանասն»: Ճշ.  
ընթ. (Առ 15.27-32: Յվլ 2.12-13:  
Ա.ՏՄ 1.12-17: Ստ 27.50-61):

21 **Գ2. ԱԶ. Արբոցն՝ Թեոդիտոնի քա-  
հանային, եւ Ձեսոնի գինաւորին, եւ  
Սակարայ, Եւդոքսեայ, եւ Ռոմե-  
լայ:** Օրհ. մրտ. 'ի ծայնեն: Յրց.  
մրտ. բձ. բ. «Ընդ սուրբս քո»: Մնկ.  
եւ Յմբ. մրտ. 'ի ծայնեն: Ժմտ. «Ի  
տաճարի»: Ճշ. ընթ. (Իմստ 1.11-  
15: Ողբ 3.22-56: Ա.ՏՄ 5.17-21: Ստ  
10.26-33):

28



Յնունդ լուսնի  
Առաջին անձրեւք եւ ամպամած

- 22 **Դշ. Ակ. Պահը:** Յրց. ապշ. գծ. դ. 29  
«Յարցն մերոց կստուած»: Սնկ. եւ  
Յմբ. ապշ.՝ի ձայնեն: ճշ. ընթ. (Գդ.  
4.19-5.1: Ղկ 4.31-40):
- 23 **Եշ. ԲԶ. Սրբոց Խարիթեանցն,** եւ 1  
սրբոց վկայիցն՝ Արտեմեայ, եւ  
Քրիստափորի, եւ Երկուց կանացն՝  
Կալինիկեայ եւ Ակիլինեայ: Օրի.  
մրտ.՝ի ձայնեն: Յրց. մրտ. բկ. ա.  
«Օրինեմք զքեզ»: Սնկ. եւ Յմբ. դկ.  
(Երկուց բհրուոց) «Այսօր ընդ  
անմարմնոցն»: Ժմտ. «Ի տաճա-  
րի»: ճշ. ընթ. (Իմստ 3.11-17: Ես  
51.22-52.3: Ա.Թս 2.13-16: Ցհ 15.11-  
16):

Հայկական տոմարաւ՝  
Սահմի, 30 օր

Խպամական տոմարաւ՝  
Ճեմատ-Լ-առւալ, 30 օր

- 24 Ուր. ԲԿ. Պահք: Յոց. ինգ. բկ. «Արարիչ եւ մարդասէր»: Սնկ. Խաչի բկ. թ. «Խաչն կենարար»: Յմբ. ապշ.՝ի ծայլեն: Ճշ. ընթ. (Գդ 5.2-15: Ղկ 5.17-26):

⊗ Խ Կարիթետ  
Միջին ամիս աշնանային

- 25 Ծբ. ԳԶ. Սրբոց Երկոտասան վարդապետացն՝ Ութեռսի, Դիոնեսիոսի, Ստեղեսատրոսի Յառմայեցւոյն, Աթանասի Աղեքսանդրացւոյն, Կիւրողի Երուսաղեմացւոյն, Եփրեմի Խուրին Ասորույն, Բարսոյի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին, Եւ Կիւրողի Աղեքսանդրացւոյն: Օրի. ակ. «Ողք զարդարեցին» (իւր սարօթն): Սնկ. գձ.

«Յանդիսացեալք»: Ժմտ. «Չհայրապետական»: Ծշ. շրկ. ղձ. «Այսօր երկնայնոցն»: Յերեկոյին Մես. «Ետուր երկիւլածաց»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Յմբ. աձ. «Յրաշակերտ եւ զօրեղ» (յատեան): Ծշ. ընթ. (Առ 11.2-11: Ես 61.3-7: Եբբ 13.7-9: Յհ 16.33-17.8):

- 26 **Ք Կիր. ԳԿ. Է. զկնի Ս. Խաչի: SOU 4**  
**ԳԻՒՏՈՅ ԽԱՉԻՆ:** Ի տեղի հանգըստեան շարականի՝ «Այսօր անճառ» եւ «Տարածեալ», Ալետարան խաչելութեան: «Բարբառելով»: Երգ՝ «Տրումահաղորդ»: Օրի. աձ. «Յրաշակերտ եւ զօրեղ» (իւր սարօթ): Յորժամ երգեսցեն զԳ. տունն Յարցի՝ «Ուստի բուրելով», խնկարկեսցեն սեղանոյն եւ ժողովրդեանն: «Ս. Աստուած որ խաչեցար»: Գիրք, Սղ. ՁԵ. «Տուր զօրութիւն», Ալետարան: «Նորաստեղծեալ», «Խընդ-

րեսցուք», «Թում ամենազօր»:  
Ժմտ. «Առաջի պատուական»: Սրբ.  
«Ո՞վ է որպէս»:

Յերեկոյին Մես. խաչի: «Ս. Աստ-  
ուած որ խաչեցար»: Յմբ. բձ. «Ա-  
պալիսեցաք»: «Ս. խաչիւ», «Կե-  
ցո», «Պահպանեա»: Ծշ. ընթ.  
(Խմստ 14.1-8: Ես 33.22-34.1: Ա.Կր  
1.18-24: Մտ 24. 27-36):

- |    |  |   |
|----|--|---|
| 27 | <b>Բ2. ԴԶ. Սրբոցն՝ Անաստասայ քա-<br/>հանային, եւ Վարոսի, եւ Թեոդի-<br/>տեայ եւ Որդւոց նորա, եւ որոց<br/>ընդ նմա կատարեցան:</b> Օրի. մրտ.<br>՚ի ծայսեն: Յրց. մրտ. քկ. թ. «Որք<br>ի մարտի»: Մնկ. եւ Յմբ. մրտ. ՚ի<br>ծայսեն: Ժմտ. «Ի տաճարի»: Ծշ.<br>ընթ. (Առ 3.1-6: Եր 17.7-8: Բ.ՏՄ<br>2.3-10: Մտ 19.27-29): | 5 |
| 28 | <b>Գ2. ԴԿ. Սրբոց Յիպերիքեանցն,<br/>որք ՚ի Սամուսատ կատարեցան:</b>  | 6 |

**Եւ սրբոցն՝ Սեւերիանոսի Սեբաստացոյն, Բաբելայ ծերոյն, եւ ութսուն եւ չորս աշակերտաց Նորին:**  
Օրի. մրտ.՝ ՚ի ծայնէն: Յոց. մրտ. գձ. ա. «Որք զտանշանս»: Սևկ. եւ Յմբ. մրտ.՝ ՚ի ծայնէն: Ժմտ. «Իտաճարի»: Ճշ. ընթ. (Առ 12.8-13: Ես 49.8-11: Բ.Կր 4.6-14: Յհ 10.21-24):

- 29 **Դշ. ԱԶ. Պահը:** Յոց. ապշ. գձ. ե. աղց. «Օրինեալ ես Տեր»: Սևկ. եւ Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնէն: Ճշ. ընթ. (Գդ 5.16-26: Ղկ 7.36-48): 7

 Առաջին Քառորդ լուսնի  
Ամպամած եւ անձրեւային եղանակ

- 30 **Եշ. ԱԿ. Սրբոյն Յովիանու Ռոկեբերանի հայրապետին:** Օրի. ակ. «Որք զարդարեցին» (իւր սարօցն): Սևկ. եւ Յմբ. դկ. ստեղի՝ «Որ յա-

Նըսկիզբն ի Յօրե»: Ժմտ. «Զհայրապետական»: Ծշ. շրկ. գձ. «Զառաշնորդս»: Ծշ. ընթ. (Ես 49.1-6: Գրծ 20.25-38: Յհ 15.17-25):

- 31 **Ուր. ԲԶ. Պահը:** Յոց. հնգ. գձ. 9  
«Օրինեմք զբեզ»: Սնկ. Խաչի բձ.  
գ. «Ապալինեցաք»: Յմբ. ապշ. 'ի  
ծայնեն: Ծշ. ընթ. (Գղ 6.1-13: Ղկ  
8.4-16):



## ՆՈՅԵՄԲԵՐ

30

- 1 ✕ Ծբ. ԲԿ. ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ, 10  
ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ, ՅԱՅՏԻՅ ԵՒ ԱՆ-  
ՅԱՅՏԻՅ: Օրի. զձ. «Երանելի սուրբ  
առաքեալք»: Քրց. դկ. «Առ քեզ  
Աստուած» (Ամենայն սրբոց): Մեծ.  
դկ. «Նահապետաց»: Ողբ. (Մար-  
գարեից) դձ. «Որ աւետարո քում»:  
Տոյ. (Վարդապետաց) դձ. «Վյսօր  
Երկնայնոցն ընդ մեզ»: Մսկ. Կու-  
սանաց դկ. «Յիշատակ Թրիստոսի»  
Եւ Մարտիրոսաց դկ. «Որք Եկեալ

եմք»: Ի վերջ «Տերն յետ ստեղծման»ին ի ձայն ասա զ «Փառաւորեալ Տեր»ն (Վերջին տուն Հաւատով Խոստովանիմ աղօթից) եւ ապա «Զրիստոս Աստուած մեր» Մաղթանքն՝ Եղանակաւ: Ժմտ. «Բարեխօսութեամբ»: Ճշ. շրկ. թձ. «Պարծանք Եկեղեցւոյ» եւ «Աստուած փրկիչ մեր»: Յմբ. աձ. «Սուրբ Ես Տեր» եւ «Երկնաքաղաքացին»: Ճշ. ընթ. (Իմստ 3.1-8: Ես 33.5-8: Եբր 11.32-12.2: Ղկ 12.4-9):


Լ.ս. Ամենայն Սրբոց

2. ✕ Կիր. ԳԶ. Ը. զկնի Ս. Խաչի: Յրց. 11  
յար. դկ. ա. «Որ զամենազօր»:  
Մեծ. դկ. «Աստուածածին մայր եւ  
Կոյս»: Յմբ. յար. գձ. գ. «Ի խա-  
չանիշ»: Ճշ. ընթ. (Ես 22.15-25: Եփ  
1.1-14: Ղկ 8.17-21):

Լ.ս. Յիշատակ համօրէն ննջեցելոց

- 3 **ԲՀ. ԳԿ. Սրբոցն՝ Ստեփանոսի Հոռվ-** 12  
մայ հայրապետին, եւ քահանա-  
յիցն, եւ սարկաւագացն, եւ ժողո-  
վըրդոցն: Օրի. մրտ. 'ի ծայնէն:  
Յոց. մրտ. դձ. ա. «Յուսացեալքն»:  
Սևկ. դձ. «Յնծայ այսօր»: Ժմտ.  
«Չհայրապետական»: Ճշ. շրկ. զձ.  
«Չառաջնորդս»: Յմբ. դկ. «Մար-  
տիրոս եւ Վկայ»: Ճշ. ընթ. (Իմստ  
5.1-8: Ամս 3.12-15: Եփ 3.1-10: Յհ  
10.11-16):
- 4 **ԳՀ. ԴԶ. Սրբոցն՝ Ակիփսիմեայ ե-** 13  
պիսկոպոսին, եւ Յովսեփայ քահա-  
նային, Այիթալայ սարկաւագին, եւ  
Պղատոնի Վկային: Օրի. մրտ. 'ի  
ծայնէն: Յոց. մրտ. դձ. բ. «Սուրբ  
եւ Տեր»: Սևկ. եւ Յմբ. մրտ. 'ի ծայ-  
նէն: Ժմտ. «Ի տաճարի»: Ճշ. ընթ.  
(Առ 8.12-21: Նհ 2.1-7: Ա.ՏՄ 5.17-  
21: Ղկ 9.23-27):
- 5 **ԴՀ. ԴԿ. Պահը:** Յոց. ապշ. գձ. զ. 14

«Օրինեալ ես Տեր»: Մսկ. եւ Հմբ.  
ապշ.՝ ՚ի ծայլեն: ճշ. ընթ. (Եփ  
1.15-2.3: Ղկ 8.22-25):



Խառնակ եւ անձրեւաբեր հողմունք

- 6 **Եշ. ԱԶ. Սրբոց հայրապետացն՝ 15**  
**Ստորովանոսի, Աղեքսանդրոսի, եւ**  
**Պօղոսի խոստովանողին եւ Խօսա-**  
**րացն՝ Մարկիանոսի եւ Մարտի-**  
**րոսի:** Օրհ. մրտ.՝ ՚ի ծայլեն: Հրց.  
 մրտ. դձ. գ. «Որք հաղորդեցան»:  
 Մսկ. դձ. «Այսօր Երկնայնցն»:  
 Ժմտ. «Զհայրապետական»: ճշ.  
 շոկ. գձ. «Չառաշնորհ»: Հմբ. գձ.  
 «Յանդիսացեալք»: ճշ. ընթ. (Իմստ  
 6.22-26: Զք 12.6-10: Եթր 13.7-9:  
 Ստ 4.23-25):
- 7 **Ուր. ԱԿ. Պահը:** Հրց. հնգ. գկ. 16  
 «Բանդ Աստուած»: Մսկ. Խաչի ակ.

ա. «Սեղան քո»: Յմբ. ապշ.՝ ի  
ծայնեն: ճշ. ընթ. (Եփ 2.4-22: Ղկ  
8.40-48):

- 8 **Ծբ. ԲԶ. Սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիէլի եւ Միքայէլի, եւ ամենայն երկնային զօրացն:** Օրի.  
ըկ. «Որ յանէց ստեղծեր» (իւր սա-  
րոցն): Ալէլուք՝ «Դասր հրեշտա-  
կաց» եւ Թագ. յաւ. Յրեշտակապե-  
տաց: Քրզ. «Աստուած Մեծ»: Մնկ.  
դկ. ստեղի՝ «Երկնաւոր հոռ ընտ-  
րեալ»: Զկնի մաղթանացն՝ Քրզ.  
«Ո. ճգնաւորօցն» եւ Աղթ. «Պսակիչ  
սրբոց»: Ժմտ. «Չոր օրինեն» եւ  
«Այսօր երկրաւորս»: Յմբ. ած.  
«Սուրբ ես Տիր» եւ «Երկնաքաղա-  
քացին»: ճշ. ընթ. (Ծն 18.33-19.2:  
Յոր 38.4-7: Ես 6.1-7: Եզ 1.1-20:  
Եբր 1.6-14: Մտ 18.10-14):
- 9 **❖ Կիր. ԲԿ. Թ. զկսի Ս. Խաչի:** 18  
Յրց. յար. դկ. բ. «Այսօր ցնծան»:

Մեծ. դկ. «Աստուածածին պայծառ»: Յմբ. յար. բկ. թ. «Քրիստոս յարեաւ» (ցվերջն): ճշ. ընթ. (Ես 24.1-13: Եփ 5.15-33: Ղկ 8.49-57):

- 10 **Բ2. Գ2. Սրբոցն՝ Մելիտոսի Անտիռայ հայրապետին, եւ Մինասայ Եգիպտացւոյն, եւ միևն Մելիտոսի Եախսկոպոսին, Բուրայ քահանային, եւ Ծինու սարկաւագին:** Օրի. մրտ. 'ի ծայնեն: Յրց. մրտ. դժ. ա. «Առ քեզ Աստուած»: Սնկ. եւ Յմբ. մրտ. 'ի ծայնեն: Ժմտ. «Զհայրապետական»: ճշ. շրկ. գձ. «Զառաջնորդս»: ճշ. ընթ. (Իմստ 4.7-15: Ես 12.1-6: Ա.Յհ 5.1-6: Ղկ 9.23-27):
- 11 **Գ2. ԳԿ. Սրբոցն՝ Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային:** Յրց. մրտ. դկ. թ. «Որ զիրաշափառ»: Սնկ. եւ Յմբ. մրտ. 'ի ծայնեն: Ժմտ. «Ի տաճարի»: ճշ. ընթ.

19

20

(Առ 15.33-16.7: Ովս 14.9-10: Տիտ  
3.3-8: Մը 13.9-13):

- 12 **Դշ. ԴԶ. Պահը:** Յրց. ապշ. գկ. ա. 21  
աղց. «Սուլրը Աստուած»: Մնկ. եւ  
Հմբ. ապշ.՝ ի ձայնեն: Ճշ. ընթ.  
(Եփ 6.1-9: Ղկ 9.10-17):

 Վերջին քառորդ լուսնի  
Հողմ, սաստիկ անձրեւ եւ  
մերթ պարզ ու ամպամած


- 13 **Եշ. ԴԿ. Սրբոցն՝ Գուրիասայ, Սա-** 22  
մոնասայ, եւ Աբիբայ սարկաւագին,  
Ոռմանոսի միայնակեցին, Ման-  
կանն խոստովանողին, եւ Յիւսի-  
քոսի գինաւորին: Օրի. մրտ.՝ ի ձայ-  
նեն: Յրց. մրտ. ած. ա. «Չըեզ ար-  
դար եւ ուղիղ»: Մնկ. եւ Հմբ. մրտ.  
՝ ի ձայնեն: Ժմտ. «Ի տաճարի»: Ճշ.  
ընթ. (Առ 28.10-18: Բոք 3.31-4.4:  
Բ.ՏՄ 1.6-12: Մտ 19.27-29):

- 14 **Ուր. ԱԶ. Պահը:** Յոց. ինգ. դճ. «Որ վահօք Յօր»: Մնկ. Խաչի աճ. գ. «Յրաշակերտ եւ զօրեղ»: Յմբ. ապշ.՝ ի ձայնեն: ճշ. ընթ. (Եփ 6.13-24: Ղկ 9.37-44):
- 15 **Ծր. ԱԿ. Սիրոց առաքելոցն՝ Ասդրեի եւ Փիլիպպոսի:** Օրի. գճ. «Երանելի սուրբ առաքեալը» (իւր սարօն): Ժմտ. «Առաքեալը եւ վկայը»: Յմբ. աճ. «Սուրբ ես Տեր» եւ «Ի քէն հայցեմք»: ճշ. ընթ. (Իմստ 9.13-10.2: Եր 16.16-19: Գրծ 8.26-40: Թհ 1.35-51):
- 16 **✖Կիր. ԲԶ. Ժ. զկնի Ս. Խաչի:** Յոց. յար. աճ. ա. «Որ եկիր ՚ի փրկութիւն»: Յմբ. յար. բճ. գ. «Զայս աւետաւոր» (ցվերջն): ճշ. ընթ. (Ես 25.9-26.7: Փլա 1.1-11: Ղկ 9.44-50):

**Բարեկենդան  
Յիսնակի Պահոց**

- 17 **Բ2. ԲԿ. Ա. օր Յիսևակի Պահոց:** 26  
Յոց. ապշ. գկ. բ. «Աստուած բարձրեալ»: Սնկ. եւ Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնէն: ճշ. ընթ. (Կղ 1.1-11: Ղկ 11.14-23):
- 18 **Գ2. ԳԶ. Բ. օր Յիսևակի Պահոց:** 27  
Յոց. ապշ. դժ. ա. «Յարցն մերոց Աստուած, որ ապրեցուցեր»: Սնկ. եւ Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնէն: ճշ. ընթ. (Կղ 1.12-23: Ղկ 11.27-32):
- 19 **Դ2. ԳԿ. Գ. օր Յիսևակի Պահոց:** 28  
Յոց. ապշ. դժ. բ. «Յարցն մերոց Աստուած, որ ի նեղութեան»: Սնկ. եւ Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնէն: ճշ. ընթ. (Կղ 1.24-2.7: Ղկ 11.33-42):
- 20 **Ե2. ԴԶ. Դ. օր Յիսևակի Պահոց:** 29  
Յոց. ապշ. դժ. գ. աղց. «Թո յաւիտեան»: Սնկ. եւ Յմբ. ապշ.՝ ՚ի ծայնէն: **Ապա նախատոնակ արա:** Ծրկ. ակ. «Որ նախիմաց» (իւր սարօթ): «Ս. զԱստուածածինն»,

«Կեցո», «Ընկալ Տեր»: ճշ. ընթ.  
(Կղ 3.15-4.4: Ղկ 11.49-54):



Ծնունդ լուսնի  
Մառախլապատ, ցուրտ եւ  
անձրեւային օդ

- 21 Ուր. ԴԿ. Ե. օր Յիսոսակի Պահոց: 30  
**Տօն Ընծայման սուրբ Աստուածածնի երից ամաց ՚ի տաճարն:**  
Օրի. գկ. «Երգեցէք որդիք Սիոնի»  
(իւր սարօթ): Ալելուք ծննդեան:  
Քրզ. «Մայր սուրբ»: «Ս. Աստուած որ խաչեցար»: Գիրք, ԱլԵ. «Յոզին սուրբ ԵկեսցԵ»: Աւետարան:  
«Չհանրութեալ», «Ս. զԱստուածածինն», «Կեցո», «Ընկալ Տեր»:  
Ժմտ. «Աստուածածին զքեզ խոստովանեալ»: ճշ. շրկ. գկ. «Ծառ կեսաց»: Մրբ. «Բազմութիւնը»:  
Յերեկոյին Մես. «ԻշցԵ որպես

զանձրեւ»: Յմբ. դձ. «Նոր Սիոն»:  
«Ա. զԱստուածածինն», «Կեցո»,  
«Ընկալ Տեր»: ճշ. ընթ. (Կղ 4.5-18:  
Ղկ 12.1-12: **Գիրք եւ Աւետարան**  
**Ընծայման.-** Երգ. 1.1-11: Առ 11.30-  
12.4: Ես 52.7-10: Զք 2.10-13: Սղ  
3.1-2: Բ.Կր 6.16-7.1: Ղկ 1.39-56):

22 **Ճք. ԱԶ. Արքոցն՝ Գրիգորի սրանչե-**  
**լագործին եւ Նիկողայոսի հայրա-**  
**պետացն, եւ Միւռուայ եպիսկոպո-**  
**սին:** Օրի. ակ. «Որը զարդարեցին»  
(իւր սարօքն): Մնկ. դկ. ստեղի՝  
«Յիացան անմարմինքն»: Ժմտ.  
«Չհայրապետականն»: ճշ. շրկ.  
բձ. «Որ լուսով աստուածային»:  
Յմբ. աձ. «Սուլբ ես Տեր» եւ «Երկ-  
նաքաղաքացին»: ճշ. ընթ. (Եզ  
3.16-19: Բ.ՏՄ 3.10-15: Յհ 10.11-  
16):

1

Հայկական տումարաւ՝  
Տրէ, 30 օր

Խալամական տոմարաւ՝  
Ճեմատ-էլ-սանի, 29 օր

- 23 ✠ Կիր. ԱԿ. Ա. Թիսնակի: Յոց. յար. 2  
աձ. գ. «Օրինեալ ես Տեր Աստ-  
ուած»: Յմբ. յար. ակ. թ. «Յարուց-  
եալ Տերն» (ցվերջն): ճշ. ընթ. (Ես  
36.1-9: Ա.Թս 1.1-10: Ղկ 12.13-31):

⊗ ՅԱԴԵՂՑԱՎՈՐԸ  
Վերջին ամիս աշնանային

- 24 Բ2. Բ2. Սրբոց կուսանացն՝ Յուլ- 3  
իանեայ եւ Վասիլուհոյն: Եւ սըր-  
բոցն՝ Աբրահամու եւ Խորենայ, եւ  
անարծաթ բժշկացն՝ Կոզմայի եւ  
Դամիանոսի եւ Աստուածատրոյ  
վկային: Օրի. մրտ. 'ի ծայնեն: Յոց.  
մրտ. ակ. ա. «Սուրբ Աստուած  
արարիչ»: Սնկ. եւ Յմբ. դկ. «Յիշա-  
տակ Քրիստոսի»: Ժմտ. «Ի տա-  
ճարի»: ճշ. շրկ. մրտ. 'ի ծայնեն:

- Ճշ. ընթ. (Երգ 8.14: Ովս 14.6-8:  
Բ.Կր 6.16-7.1: Ղկ 8.1-3):
- 25 **Գշ. ԲԿ. Սրբոցն՝ Դունկիանոսի քահանային, Տարագոսի, Պրոբոսի,  
Ասդրոնիկոսի, Ոնեսիմեայ, եւ այլոց աշակերտացն սրբոյն Պօղոսի:**  
Օրի. ղկ. «Խմաստութիւն Երկնային» (իւր սարօթն): Մնկ. ղկ. ստեղի՝ «Առաքեալք Աստուծոյ»: Ժմտ.  
«Առաքեալք»: Ճշ. շրկ. ակ. «Որ սիրողդ էք»: Յմբ. աձ. «Ի քեն հայցեմք»: Ճշ. ընթ. (Խմստ 9.9-12: Ես  
41.15-19: Բ.Կր 2.14-17: Ղկ 6.13-  
20):
- 26 **Դշ. ԳՇ. Պահը:** Յրց. ապշ. դժ. դ. 5  
«Որ յամենայնի»: Մնկ. եւ Յմբ.  
ապշ.՝ի ծայսեն: Ճշ. ընթ. (Ա.Թս  
2.1-12: Ղկ 12.41-48):
- 27 **Եշ. ԳԿ. Սրբոցն՝ Կղեմայ հայրապետին եւ Բագարատայ Տռռոմենոյ  
Եպիսկոպոսին:** Օրի. մրտ.՝ի ծայ-

ՆԵՆ: Յոց. մրտ. գձ. թ. «Որ զանչափ քո»: ՄԱԿ. Եւ Յմբ. գձ. «Մանկունք նոր Սիոնի»: ԺՄՏ. «Չհայրապետական»: Ճշ. շրկ. գձ. «Չառաջնորդս»: Ճշ. ընթ. (Ղր 8.33-36: Ես 66.18-21: Փլա 4.1-7: Ղկ 9.1-6):

- 28 **Ուր. ԴԶ. Պահը:** Յոց. հնգ. աձ. 7  
 «Օրինեալ ես դու»: ՄԱԿ. Խաչի դձ.  
 գ. «Գաւազան զօրութեան»: Յմբ.  
 ապշ. 'ի ծայնեն:  
 Յերեկոյին նախատօնակ արա:  
 Շրկ. գձ. «Երանելի սուրբ առաք-  
 եալք» (իւր սարօն): Որը ի ծեռս  
 ունիցին զկանոն թաղեռսի եւ  
 Բարթուղիմեոսի առաքելոցն՝ թկ.  
 «Անսկիզբն Աստուած անճառելի»  
 (զայն ասսացեն աստ իւր սարօն):  
 Նոյնպես արասցեն 'ի վաղովի: Ճշ.  
 ընթ. (Ա.Թս 2.17-19: Ղկ 12.49-59):



Առաջին Քառորդ լուսնի  
 Ցուրտ եւ անձրեւ

- 29 ✕ Ճք. ԴԿ. ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՅՆ 8  
ԵՒ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԽՈՐՉԱՑՆ ՄԵ-  
ՐՈՑ՝ ԹԱՐԵՇՈՍԻ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻ-  
ՍԵՇՈՒԻ: Օրի. գձ. «Երանելի սուրբ  
առաքեալք» (իւր սարօթն): Թագ.  
յաւ. «Այսօր դասք»: Մնկ. ակ.  
«Աշակերտք Զրիստոնսի» (Փառք  
Յորն զԳ. տունն ասել, իսկ Վյժմ եւ  
Միշտն՝ Յայրատունկ, յիշելով  
զանուանս առաքելոցն): Ժմտ.  
«Առաքեալք»: ճշ. շրկ. ակ. «Որ  
սիրողդ Եք»: Յմբ. աձ. «Սուրբ Ես  
Տեր» եւ «Ի քեն հայցեմք»: ճշ. ընթ.  
(Իմստ 9.13-10.2: Եր 16.16-19:  
Ա.Կր 12.26-13.10: Մտ 9.35-10.7):
- 30 ✕ Կիր. ԱԶ. Բ. ՅԻՍԱԿԻ: Յոց. յար. 9  
ակ. բ. «Որ վասն մերոյ փրկու-  
թեան»: Յմբ. յար. աձ. դ. «Որ ան-  
ճառ Էռլթեամբ»: ճշ. ընթ. (Ես 36.  
22-37.11: Ա.Թս 4.1-11: Դկ 13.1-9):

O. 222

ԴԵԿՏԵՄԲԵՐ

L.



## ԴԵԿՏԵՄԲԵՐ


31

- 1 **Բ2.ԱԿ.Սրբոցն՝Գենարիոսի Եպիսկոպոսին եւ Մերկիւռիոսի զինատորին:** Եւ սրբոցն՝ Յակովկայ եւ Իրաւափառայ: Օրի. Մրտ.՝ ՚ի ձայնեն: Յոց. գկ. «Զինուորութիւնը»: Մսկ. եւ Յմբ. ած. «Զինաւորն Քրիստոսի»: Ժմտ. «Զօրական»: Ճշ. ընթ. (Ըս 35.4-8: Բ.Կր 3.18-4.6: Ղկ 12.12-19):
- 2 **Գ2.ԲԶ.Սրբոցն՝Կուռնելիոսի հա-** 11

դիւրապետին, Ծմաւոնի՝ ազգականին քրիստոսի որ խաչեցաւ յերուսաղէմ, Պողիկարպոսի հայրապետին Զմիւնիոյ եւ սրբոց Վկայիցն, որը յԱրեւելս կատարեցան: Օրի. Մրտ. 'ի ձայնեն: Յրց. դկ. (զԵօթանասնիցն) «Որ ի Յօրէ առաքեցար»: Մնկ. եւ Յմբ. ակ. «Աշակերտը քրիստոսի»: Ժմտ. «Առաքեալք»: Ճշ. շրկ. ակ. «Որ սիրողդ էք»: Ճշ. ընթ. (Իմստ 1.1-7: Եր 16.16-21: Գրծ 1.12-14: Մր 6.6-13):

- 3 3. Ղ2. ԲԿ. Պահը: Յրց. ապշ. դժ. ե. 12 «Ճշմարտապես գոհանամք»: Մնկ. եւ Յմբ. ապշ. 'ի ձայնեն: Ճշ. ընթ. (Ք.Թս 5.1-11: Ղկ 13.10-17):
- 4 4. Ե2. Գ2. Սրբոց հարցն Եգիպտաց- 13 լոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գբեցւոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսենի, Սիսիանու, Դանիելի,

**Սրապիոնի, Սակարիոսի, Պիմենի  
եւ այլոց սրբոց հարցն:** Օրհ. աձ.  
«Որ գերազանցեալ» (յոգևակի  
ասա, իւր սարօթն): Մնկ. եւ Յմբ. թձ.  
«Պարծանք Եկեղեցւոյ»: Ժմտ.  
«Ճգնաւորք Թրիստոսի»: Ծշ. շրկ.  
աձ. «Որ անմարմնական վարուք»:  
Ծշ. ընթ. (Առ 21.15-25: Ես 19.19-21:  
Եբբ 11.32-40: Մտ 10.37-42):



Լրումն լուսնի

Ցուրտ եւ անձրեւ

- 5 **Ուր. ԳԿ. Պահը:** Յոց. ինգ. ակ. 14  
«Գոհաբանեմք զքեզ»: Մնկ. Խաչի  
գկ. գ. «Ով պահապան»: Յմբ.  
ապշ.՝ ի ձայնեն: Ծշ. ընթ. (Ա.Թս  
5.12-28: Ղկ 14.1-11):
- 6 **Ծբ. ԴԶ. Սրբոյն Նիկողայոսի զմիւ-  
նացւոյ սրանչելագործ հայրապե-  
տին:** Օրհ. ակ. «Որք զարդարեցին» 15

(իւր սարօքն): Մնկ. դկ. ստեղի՝  
 «Յիացան անմարմինքն»: Ժմտ.  
 «Չհայրապետականն»: Ճշ. շրկ. բձ.  
 «Որ լուսով աստուածային»: Յմբ.  
 աձ. «Սուրբ Ես ՏԵՐ» Եւ «Երկնա-  
 քաղաքացին»: Ճշ. ընթ. (Եզ 3.16-  
 19: Բ.ՏՄ 3.10-15: Յհ 10.11-16):

- 7 **❖ Կիր. ԴԿ. Գ. Յիսևակի:** Յրց. յար. 16  
 բձ. բ. «Անապական բանդ Աստ-  
 ուած»: Յմբ. յար. դկ. դ. «Յրեշտակ  
 քո»: Ճշ. ընթ. (Ես 37.14-38: Բ.Թս  
 1.1-12: Ղկ 14.12-24):

**Բարեկենդան  
Ս. Յակոբյան պահոց**

- 8 **ԲՀ. ԱԶ. Սրբոցն՝ Մինասայ, Երմո-** 17  
**գինեայ, Եւգրափոսի:** Եւ կամաւոր  
 աղքատացն՝ Յովիաննու Եւ Ալեքս-  
 իանոսի: Օրհ. մրտ. 'ի ծայնեն:  
 Յրց. մրտ. ակ. բ. «Որ բարձրեալդ  
 Ես»: Մնկ. Եւ Յմբ. բկ. «Չյիշատակ

վկայիցն»: Ժմտ. «Ի տաճարի»:  
**Յերեկոյին Նախատօնակ արա:**  
 Ծրկ. ակ. «Որ նախիմաց» (իւր  
 սարօթն): «Ս. զԱստուածածինն»,  
 «Կեցո», «Ընկալ Տէր»: Ճշ. ընթ.  
 (Առ 15.33-16.7: Ես 18.7: Փլա 1.27-  
 2.4: Մտ 10.37-42):

Լ. Յղութիւն

Ս. Աստուածածնի յՍ.Յնայէ

- 9 **Գշ. ԱԿ. Պահք: Տօն Յղութեան 18**  
**սրբոյ Կոսին Մարիամու ՚ի յԱննա-**  
**յէ: Զկնի «Ճանապարհ մոլորե-**  
**լոց»ին երգ՝ «Զայսիւ առ քեզ»:**  
 Օրի. գկ. «Երգեցէք որդիք» (իւր  
 սարօթն): Ալելուք ծննդեան: Քրզ.  
 «Մայր սուրբ»: «Ս. Աստուած որ  
 խաչեցար»: Վապա գիրք, Ալէ. «Ու-  
 րախ լեր բերկրեալդ»: Աւտարան:  
 «Էական», «Խնդրեսցուք», «Կեցո»,  
 «Ջում ամենազօր»: Ժմտ. «Աղա-

- չեմք զըեց»: Սրբ. «Բազմութիւնք»:  
Յմբ. դձ. «Նոր Սիոն»: «Ս. զՎստ-  
ուածածինն», «Կեցո», «Ընկալ  
Տեր»: ճշ. ընթ. (Երգ 6.3-8: Սղ 3.1-  
2: Գղ 3.24-29: Ղկ 1.39-56):
- 10 **Դշ. ԲԶ. Պահը:** Յրց. ապշ. դձ. գ. 19  
«Տեր Աստուած մեր»: Մնկ. եւ Յմբ.  
ապշ.՝ ի ծայսէն: ճշ. ընթ. (Բ.Թս  
2.1-16: Ղկ 14.25-27):
- 11 **Եշ. ԲԿ. Պահը:** Սրբոցն՝ Եւստոռա- 20  
տիոսի, Օքտևստիոսի, Եւզիստիոսի,  
Ովուստեսի եւ Մարդարիոսի: Օրի.  
մրտ.՝ ի ծայսէն: Յրց. բձ. ա. «Ան-  
խակալ եւ բարեգութ»: Մնկ. եւ Յմբ.  
ըկ. «Որ զիուր սիրոյ քո»: Ժմտ. «Ի  
տաճարի»: ճշ. ընթ. (Ղո 1.1-9: Նհ  
2.1-7: Յո 5.1-5: Մտ 5.1-12):

 Վերջին ժառորդ լուսնի  
Ցուրտ եւ անձրեւ

- 12 **Ուր. ԳԶ. Պահը:** Յոց. ինգ. բձ. «Որ թագաւորդ ես»: Մնկ. Խաչի գծ. ա. «Փայտ կենաց»: Յմբ. ապշ.՝ ի ձայնեն:
- Յերեկոյին նախատօնակ արա: Ծրկ. գկ. «Յաղթող եւ սուրբ» (իւր սարօթն): ճշ. ընթ. (Բ.Թս 3.1-18: Ղկ 15.1-7):
- 13 **❖ Ճք. ԳԶ. Սրբոցն՝ Յակոբայ Սըծ-** 22  
բընայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին եւ Մելիտոսի եպիսկոպոսին: Օրի. գկ. «Յաղթող եւ սուրբ» (իւր սարօթն): Ժմտ. «Զհայրապետական»: Յմբ. ած. «Սուրբ ես Տէր» եւ «Երկնաքաղաքացին»: ճշ. ընթ. (Իմստ 7.12-20: Ես 44.1-5: Եբր 13.17-21: Յի 9.39-10.10):
- 14 **❖ Կիր. ՂԶ. Դ. Յիսևակի:** Յոց. յար. 23  
բկ. բ. «Ալսկիզբն Աստուած»: Յմբ.  
յար. դձ. դ. «Որ ի վերդ ես»: ճշ. ընթ.  
(Ես 38.1-8: Եբր 1.1-14: Ղկ 17.1-10):

- 15 **ԲՀ. ԴԿ. Սրբոց հայրապետացն՝ Իգ-** 24  
**նատիոսի, Աղդեհ եւ Մարութայի:**  
Օրհ. մրտ. 'ի ծայնեն: Յոց. մրտ.  
դձ. գ. «Որք հաղորդեցան»: Մնկ.  
եւ Յմբ. դձ. «Որ իրավիրեցեր զյա-  
ռաջագոյն»: ճշ. շրկ. գձ. «Զառաջ-  
նորդս»: ճշ. ընթ. (Իմստ 5.1-8: Եր  
6.16-21: Ա.Կր 4.9-16: Մր 9.32-36):
- 16 **ԳՀ. ԱԶ. Սրբոցն՝ Թէոպոմպայ ե-** 25  
**պիսկոպոսին, եւ Թէովլայ վկային,**  
**եւ չորից գիևաւորացն՝ Բասոսի,**  
**Եւսեփի, Եւտիքի եւ Բասիլիդեայ:**  
Օրհ. մրտ. 'ի ծայնեն: Յոց. մրտ.  
բձ. թ. «Ընդ սուրբս քո»: Մնկ. եւ  
Յմբ. մրտ. 'ի ծայնեն: Ժմտ. «Զիայ-  
րապետական»: ճշ. շրկ. գձ. «Զա-  
ռաջնորդս»: ճշ. ընթ. (Ար 24.1-12:  
Եր 15.16-20: Եբր 12.1-7: Մտ 10.  
26-33):
- 17 **ԴՀ. ԱԿ. Պահը:** Յոց. ապշ. դձ. Ե. 26  
աղց. «Որ զերիս մանկուսսն»: Մնկ.

- Եւ Յմբ. ապշ.՝ ի ծայնեն: ճշ. ընթ.  
(Եբր 2.1-10: Ղկ 17.11-19):
- 18 **Եշ. ԲԶ. Սրբոց կուսանացն՝ Ին-** 27  
դոսի եւ Դոմնայի, եւ Գդերիկոսի  
քահանային, եւ Երկուց բիւրուցն՝  
որք այրեցան յԵկեղեցին Նիկոմի-  
դացւոց: Օրի. մրտ.՝ ի ծայնեն:  
Յրց. մրտ. թկ. ա. «Օրինեմք զբեզ  
Տեր»: Մնկ. եւ Յմբ. դկ. «Այսօր ընդ  
անմարմնոցն»: Ժմտ. «Ի տաճա-  
րի»: ճշ. շրկ. մրտ.՝ ի ծայնեն: ճշ.  
ընթ. (Իմստ 3.1-8: Եր 30.18-22:  
Ա.Ղտ 4.12-19: Յհ 15.17-25):
- 19 **Ուր. ԲԿ. Պահը:** Յրց. հնգ. թկ. 28  
«Արարիչ եւ մարդասեր»: Մնկ.  
Խաչի թկ. բ. «Խաչն կԵնարար»:  
Յմբ. ապշ.՝ ի ծայնեն: ճշ. ընթ.  
(Եբր 3.12-4.10: Ղկ 18.1-8):
- 20 **Ծբ. ԳԶ. Սրբոյն Աբգարու նախա-** 29  
վկայ եւ՝ ի քրիստոսի անդրանիկ  
հաւատացեալ թագաւորին մերոյ:

Օրի. ակ. «Որ զերկնաւոր» (իւր սարօթն): (Գիրք Եւ Աւետարան Թեղոսինն է): Ժմտ. «Որպէս յետ աստուածասէր թագաւորին»: Ծշ. շրկ. բձ. «Աստուած Փրկիչ մեր»: Յմբ. բկ. «Ով երանելիդ»: Ծշ. ընթ. (Իմստ 6.2-10: Ես 45.1-3: Ա.Տմ 2.1-7: Ղկ 7.1-10):

 Ծնունդ լուսնի

Մառախլապատ, ցուրտ եւ  
անձրեւային օդ

- 21 **✖Կիր. ԳԿ. Ե. Յիսևակի:** Յրց. յար. 1  
գձ. բ. «Փառաւորեալ որդի Աստուածոյ»: Յմբ. յար. գկ. բ. «Զաստուածային» (ցվերջն): Ծշ. ընթ. (Ես 40. 18-31: Եբր 4.16-5.10: Ղկ 18.9-14):

Խսլամական տոմարաւ՝  
Բէթէպ, 30 օր

